№ 8 (185) XVII ՏԱՐԻ ՕԳՈՍՏՈՍ 1907

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
REDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՎԱՅՐԿԵԱՆԻ ՊԱՀԱՆՋԸ

Գանձակի դէպքերը մի աւելորդ անգամ գալիս են յիշեցնելու, որ անմտութիւն է՝ տարուել օպտիմիստ և բաղձանքներով, որ մեր դժբախտ, ծայրէ-ծայր արիւնոտուած Անդրկովկասը ենթակայ է նորանոր դաւերի ու փորձութիւններին։ Մեր դահիճները երբէք չեն մոռանում մեզ. չեն մոռանում հայ ժողովրդին և նրա հովանաւոր կազմակերպութիւնը, որ ի տեղի փոքրանալու, միշտ աւելի և աւելի աճում է, սեղմում իր մարտական շարքերը և համարձակ դիմաւորում հայ աշխատաւոր ընդհանրութեան թշնամիներին։

Նորից արեան հոտ է փչում Կովկասից։ Գրեթէ նոյն ժամանակ, երբ Նելիդովը, ռուսական դիւանագիտութեան գոռոզ ու հայակեր ներկայացուցիչը, Հաագի խորհրդաժողովում իր նախագահական բարձրութիւնից պաղ ու վճռական մերժումն է ուղղում Հայոց Կաթողիկոսի պատգամաւորութեանը՝ թիւրքաց Հայաստանի ինդրի առթիւ,—Անդրկովկասում նոյն անկշտում բռնապետութեան ուրիշ ներկայացուցիչները նոր դաւ են նիւթում մեր ժողովրդի և մեր կազմակերպութեան դէմ։

Ո՞րքա՞ն դիւրին է պատրուակներ գտնել, երբ դժոխային միտքը յղացած է արդէն։ Սպանուել է Գանձակի մօտ երկու անյայտ անձնաւորութիւնների ձեռքով, Գուր անուն մի գերմանացի կապիտալիստ։

Մէկը առօրեայ, սովորական դէպքերից, այժմեան աւէկոծ Ռուսաստանում։

Կոզակները հետամտելով ահաբեկիչներին, յարձակում են գործում երկու անմատն հայ երիտասարդների վրայ, բայց վերջիններս պաշտպանւում են և սպանում կոզակներից մէկին։

Եւ ահա արդէն պրովոկացիայի հողը պատրաստ։ Կոզակներին սկսում են գրգռել հայերի դէմ։ Սպանուած կոզակին սարքում են հանդիսաւոր և շքեղ թաղում, հակահայկական ցոյցերով։ Թափօրը հայոց թաղով անցնելիս, սկսւում է հրացանաձգութիւն հայերի վրայ։ Երկու հոգի սպանուած, բազմաթիւ վիրաւորներ։ Երեք օրից յետոյ պրովոկացիան, քաջալերուած ու հրահանգուած բարձր իշխանութիւնների կողմից, վերսկսում է իր արիւնոտ գործը. դարձեալ շինծու պատրուակներ, դարձեալ սպանութիւն, թալան, աւերածութիւն։ Ամբողջ Գանձակը սարսափի մէջ։ Ազգաբնակութեան մի մասը փախչում է դէպի աւելի ապահով վայրեր, երկիւղ կրելով վատթարագոյնից։

Եւ „կառավարութիւնը՝ անտարբեր"—այսպէս է գուժում նոր պօգրոմի հեռագիրը. այդպէս էին վերջանում և բոլոր անցեալ պօգրոմների մասին խմբագրուած հեռագիրները... պատմութիւնը յաւերժօրէն վերսկըսւում է ցարիզմի անիծեալ տիրապետութեան տակ... Պարբերաբար—նոյն մարդասպան աղաղակները, նոյն մռնչոտն բառաչիւնը դժբախտ հալածական զոհերի, նոյն դժոխային տեսարանները... Ահա դրանց մի այլ նմուշը Օդեսայում։ Այնտեղ էլ գրեթէ նոյն վայրկենին ջարդում են հրէաներին։ Զարմանալի զուգադիպութիւն։ Պատահա՞կն, թէ նախորոշուած... Արդեօք Պետերհօֆի երկչոտ բորենիները նորի՞ց վճռել են ազատութիւն տալ իրենց յօշոտող ախորժակներին։ Արդեօք բաւական չէ՞ն համարում հազարաւոր անմեղ քաղաքացիների թափուած արիւնը։

Ոչ, անշուշտ, ոչ։ Եւ ինքը գեներալ Գլագօլևն է խոստովանում այդ, ինքը, Օդեսայի հերոսներից մէկն է, որ բարձրաձայն յայտարարում է.

—„Ջարդերի պատասխանատուութիւնը ընկնում է հրէաների վրայ, և ռուս հայրենասէրները պատժում են նրանց յեղափոխական ոգին"։

Քիչ անգամ են արիւնախում բիւրօկրատները այդպիսի անկեղծութեամբ յայտարարել իրենց քստմնելի արարքների գաղտնիքը։ Նոյնանման յայտարարութիւն կարող էին անել մեր Գանձակի դահիճները։ Բայց նրանք գերադասում են վարագուրել իրենց իսկական շարժառիթները ողորմելի պատրուակներով։

Ոչինչ չի շեղի յեղափոխական կազմակերպութիւններին իրենց գծած ճանապարհից։ Ոչինչ չի շեղի մասնաւորապէս Հ. Յ. Դաշնակցութեանը, որ կարողացաւ դիմանալ այնքան անողորմ հակայեղափոխական փոթորիկների և մնաց կուռ, անընկճելի։ Նրա դէմ մղեցին թուրքական վանդէականների ահաւոր բանակը, մտածելով խորտակել նրան կամ չէզոքացնել նրա ուժերը յեղափոխական տեսակէտից, բայց և դա-

ուրն հիասթափութիւն կրեցին... Փոխանակ ընկճուելու սարսափելի կոշմարի տակ, նա աւելի էր արմատներ ձգում ժողովրդի մէջ, աւելի էր աճում նրա վարկը ինքնապաշտպանութեան կռիւների մէջ, աւելի էր նա տիրանում այդ ժողովրդի սրտին, կամքին, ամբողջ ճակատագրին... Եւ միթէ՞ այդ հանգամանքը չէր, որ թելադրեց կովկասեան բիւրօկրատիային՝ հրաժարուել իր քաջալերական ու գրգռիչ ընթացքից Թուրք-Հայկական պատերազմի մէջ...

Եթէ կայ մի իրողութիւն, որ շատ թէ քիչ մխիթարում է մեզ Գանձակի վերջին պօգրօմի հանդէպ, —դա այն է՝ որ միանգամայն ապարդիւն են անցել իշխանութիւնների բոլոր ջանքերը՝ լարել տեղական թուրք ազգաբնակութիւնը հայերի դէմ։ Այդ և մի քանի ուրիշ փաստեր յոյս են տալիս, որ մեր մահմէդական հարևանները, ի դէմս իրենց գիտակից տարրերի, մի անգամ ընդմիշտ հրաժարիմք են ասել եղբայրասպան կռիւներին... Սակայն, չենք ուզում լինել միամիտ—օպտիմիստ. չենք մոռանում, որ Թուրք ամբոխի մէջ կան տակաւին և այնպիսի տարրեր, որոնք կարող են տխուր գործիքի դերը ստանձնել և վերսկսել արիւնոտ սերեան։ Աւա՜ղ, ոչ... բիւրօկրատիան անխոնջ գործում է այդ ուղղութեամբ և ոչ մի արգելք չի կանգնեցնում նրան... Վաղը նա կարող է հրապարակ հանել հայ ժողովրդի, երիտասարդութեան դէմ սև-հարիւրակներին, խուժանին, կօզակներին։ Եւ մենք թերևս նորից սկսենք սիզիֆեան աշխատանքը... Այդպէս է մեր դժբախտ իրականութիւնը, մեր հաւանական հեռապատկերը։ Եւ այդ գիտակցութեամբ տոգորուած՝ մեզ մնում է միշտ կազմ ու պատրաստ պահել մեր շարքերը, որպէսզի կարողանանք պատուով դիմաւորել գալիք անցքերին և թոյլ չը տանք, որ հայ աշխատաւոր ժողովրդի սրբազան դատը խեղդուի հակայեղափոխական լավաների պղտոր հոսանքում։

Վայրկեանի լրջութիւնը մի ուրիշ բան էլ է պահանջում, հրամայականօրէն։ Ցարիզմը—ինչպէս իրաւամբ բացականչում էր Վանդերվելդը Շտուտգարտի կոնգրէսում—ստացել է մահուիթ հարուածը, բայց դեռ հրէշը ապրում է նրա մէջ։ Օրհասաւորի յանդգնութեամբ նա շարունակում է գոյութեան կռիւը, ձգտելով ըստ կարելւոյն շատ երկարացնել այդ գոյութիւնը։ Որքան աւելի ամրապնդէ նա իր դիրքերը, այնքան աւելի ծանր ու անողորմ պիտի դառնան նրա հարուածները... մանաւանդ այն երկրներում, պետութեան այն „կարմիր“ հատուածների մէջ, ուր յեղափոխութեան „համաճարակը“ ամենից աւելի է փորփորել բռնապետութեան երբեմն ամրակուռ պատուանդանը.. Կովկասը, ամենայն հաւանականութեամբ, պիտի լինի քաւութեան մեծագոյն նոխազներից մինը վերակազդուրուող ռեակցիայի ձեռքում։ Դրա մասին է, որ պէտք է մտածել։ Այդ ահաւոր խնդիրն է, որ պէտք է որոճան բոլոր նրանք, որոնք իրենց կոչուած են զգում՝ վարելու մեր երկրի ճակատագիրը։ Հ. Յ. Դաշնակցութիւնը մինչև օրս շատ յաճախ մենակ է եղել հակայեղափոխական, վանդէական ոճիրների դէմ, որոնք անօրինակ ծաւալով ու սաստկութեամբ պայթել են Անդրկովկասի վրայ։ Միւս կուսակցութիւնները ընդհանրապէս չէզոք են մնացել և յաճախ գոհացել են քննադատի, դատախազի դերով՝ „Դաշնակցութեան“ արարքների դիմաց։ Ողբալի կը լինէր, եթէ կուսակցական այդ տխուր բաղաքականութիւնը շարունակուէր և ապագայում։ Մենք միշտ քարոզել ենք համերաշխութիւն և միշտ սիրով ու շիտակութեամբ հանդէպ ենք գնացել կովկասեան ուրիշ կուսակցութիւնների „համերաշխ գործակցութեան“ հրաւէրներին։ Մեր այդ դիրքը միանգամ ևս շեշտուեց մեր վերջին Ընդհանուր ժողովում, որը յանձնարարում էր ձգտել համերաշխ կապեր ստեղծելու նոյնիսկ սոցիալ-դէմօկրատների հետ, նկատելով հանդերձ, որ այդ կուսակցութիւնը ամենից աւելի է պայքարել մեր դէմ, ճգնելով խախտել Դաշնակցութեան վարկը Անդրկովկասի ժողովուրդների աչքում։ Սոցիալիստական ու յեղափոխական բոլոր ուժերը պէտք է միանան.—այդ է մեզ համար ժամանակի չափազանց հասուն և չափազանց ստիպողական պահանջը։ Երբ բովանդակ սոցիալիստական մարդկութիւնը երկրագնդի բոլոր անկիւններում բարձրաձայն գոռում է՝ „պրոլետարներ՝ բոլոր երկրների միացէք“—մենք կովկասեան սոցիալիստներս ոճիր կը գործենք ընդդէմ մարդկութեան, եթէ շարունակենք պառակտումի ու թշնամութեան որոմը ցանել մեր երկրի պրոլետարիաների ու նրանց թարգման կուսակցութիւնների միջև։

Թող գա՜, վերջապէս, այն երջանիկ օրը, երբ բոլոր ընդդիմադիր կազմակերպութիւնները, գէթ սոցիալիզմ ու յեղափոխութիւն դաւանողները, կը համաձայնուին ընդհանուր արիւնոտ դատի շուրջը, կուղղեն իրենց միացած ջանքերը ընդհանուր, իրական թշնամու դէմ։

ԳԱՆԶԱԿԻ ՊՕԳՐՕՄԸ

(Մասնաւոր հեռագիր „Դրօշակի“)

ԹԻՖԼԻՍ, 3 սեպտեմբեր

Ահաբեկիչներու կողմէ Գանձակի մօտ հարուստ գործամանատէրի մը սպանութեան վրայ, կօզակները սպանութեան հեղինակները հալածելիս կը յարձակին երկու անմեղ մարդոց վրայ։ Այս վերջինները կը պատասխանեն ատրճանակով և կը սպաննեն մէկ կօզակ։ Այս դէպքը պատրուակ ծառայեց պօգրօմ (ջարդ) սարքելու։ Օգոստ. 30-ին մարձը իշխանութիւններու մասնակցութիւնով, սպանուած կօզակին հանդիսաւոր թաղումը կատարեցին։ Պսակ բերած էին, վրան արձանագրուած. „սպանուած հայերու կող-

մէ՝ դաւաճան ցարին և հայրենիքին»։ Երբ թափօրը կանցնէր հայկական թաղը, ենթասպան սկսաւ ատրճանակ արձակել, մինչդեռ կօզակները գրոհ տուին հայերուն վրայ, սպանելով երկու հոգի և վիրաւորելով շատեր։

Հետևեալ օրը փորձեցին հայ-թաթարական ընդհարում առաջ բերել, բարեբախտաբար անյաջող. հայ ժողովրդին վրայ, իբր պատիժ, ահագին տուգանք դրուած է։ Օգոստ. 4-ին սպայ մը 4 կօզակներով կանցնէր հայկական թաղը. կօզակը կրակ ըրաւ սպայի ծիուն վրայ, այս միջադէպը ծառայեց նշան պօգրոմի։ Առաւօտեան ժամը 10-էն սկսան թալանել և կոտորել։ Երկու հայ կիներ սպանուեցան և չարդուեցան։ Ժողովուրդը ահաբեկ թիֆլիս կը փախչի։ Կառավարութիւնը բացարձակ անտարբեր կը մնայ։

ՀԱԱԳԱՅԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ II ԿՕՆԳՐԵՍԸ

ԵՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Հայկական հարցը լուծելու մի նոր փորձը այս օգոստոսի 10-ին վերջացաւ Նոյնպիսի անյաջողութեամբ, ինչպէս մինչև այդ ժամանակ եղած նման փորձերը։ Երկու պատգամաւորութիւններ, մէկը Հայոց կաթողիկոսի նշանակած և միւսը ֆրանսիական հայասէրների կողմից, դիմումներ էին արել Հաագայի խաղաղութեան II կօնգրեսին։ Հայ պատգամաւորութեան անդամներն են եղել Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեան, պ. պ. Ա. Ահարոնեան և Յ. Շահնազար։ Հայասէրների պատգամաւորութեան անդամներն էին „Revue de Paris"-ի խմբագիր պ. Վիկտոր Բէրար և „Pro Arménia"-ի խմբագիր Պիեր Քիյար, որոնք արտօնութիւն էին ունեցել խօսել նաև Անատոլ Ֆրանսի և Ֆրանսիս դը-Պրեսանսէի անունից։ Հայկական գատի այս չորս ականաւոր և եռանդուն պաշտպանները Ամերիկայի, Եգիպտոսի, Բուլգարիայի և Պարսկաստանի հայ գաղութների դիմումների վրայ արտօնութիւն ունէին Հաագայի կօնգրէսում խօսել իրենց անունից և ներկայացնել թիւրքահայ ժողովրդի ծանր կացութիւնը։

Երկու պատգամաւորութիւնները էլ միաժամանակ Հաագա են հասել օգոստոսի 7-ին և առանձին-առանձին բողոքագիր ներկայացրել կօնգրեսին խնդրելով հայկական հարցի քննութիւնը, որպէս միջազգային խնդրի, որ միևնոյն ժամանակ արդարութեան և հայ ժողովրդի իրաւունքի խնդիրը։

Ահա հայ պատգամաւորութեան ներկայացրած գրութիւնը.

„Պ. պատգամաւոր!

„Ամենայն Հայոց կաթողիկոսի Հաագայի կոնգրես ուղարկուած Իւթիւճեան եպիսկոպոսը վստահութիւն է առնում յիշեցնել պ.պ. պատգամաւորներին հետևեալը.

„Մեծ պետութիւնների ներկայացուցիչները 1878 թուին կազմեցին այն դաշնագիրը, որով ընդ երկար սահմանում էր թիւրքական կայսրութեան հպատակ կամ աւատական ժողովուրդների բախտը։ Նոյն ժամանակ Պոլսի հայոց պատրիարք Տ. Ներսէս արքեպիսկոպոս մի պատգամաւորութիւն ուղարկեց Բերլին, առաջնորդութեամբ Խրիմեան արքեպիսկոպոսի—այսօր Ամենայն Հայոց կաթողիկոս—առաջադրելու համար պետութիւնների ներկայացուցիչներին իր դժբախտ ժողովրդի կացութիւնը ասիական Թիւրքիայում։ Այս դիմումն էր, որ ծնունդ տուեց Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածին։

„Յօդ. 61-րդ.—Բարձրագոյն դուռը յանձն է առ-
„նում անյապաղ իրագործել հայկական գաւառնե-
„րում տեղական պէտքերին համապատասխան ան-
„հրաժեշտ բարեփոխումներն ու բարենորոգումները,
„և երաշխաւորում է հայերի ապահովութիւնը
„չէրքէզների և քիւրդերի յարձակումներից։ Բարձրա-
„գոյն Դուռը պարբերաբար կը հաղորդի ձեռք ա-
„ռած միջոցների մասին պետութիւններին, որոնք
„կը հսկեն այդ միջոցների իրագործման վրայ"։

„Քսան տարի շարունակ այս յօդուածը և ոչ մի կիրառութիւն ունեցաւ, իսկ 1894—95 թուերին բարենորոգումների փոխարէն ենթարկուեց ջարդերի։ Վեց պետութիւնների ներկայացուցիչները կազմեցին այն ժամանակ մի յիշատակագիր (memorandum) և մի պաշտօնագիր (note) որև յանձնեցին Բարձրագոյն Դրանը 1895 թուին մայիսի 11-ին։

„Դեսպանների նախագիծը պարունակում էր այն որոշումների ամբողջութիւնը, որ „անհրաժեշտ էր ի կատար ածել հայկական վիլայէթներում վարչական, տնտեսական և դատաստանական կազմակերպութեան մէջ" այլև „օգտակար էր համարում մի առանձին յայտագրով մատնացոյց անել այն միջոցները, որոնք անցնում էին վարչական կանոնադրութեան շրջանակից, բայց և որոնք հիմք էին նոյն կանոնադրութեան և Բարձրագոյն Դուռը պիտի ընդունէր այդ որպէս ամենատարրական անհրաժեշտութիւն"։

„Ն. Գ. Պ. Նելիդով՝ Պոլսի ռուսաց դեսպանը՝ յետհետ պաշտօնագիրը ներշնչողներից և ստորագրողներից մէկն եղաւ։

Ահա տասն տարի է անցել և ոչ մէկը այդ բարենորոգումներից, որ այն ժամանակ նկատւում էին անհրաժեշտ և բարերար նոյնքան մահմեդականների որքան և քրիստոնեաների համար, չիրականացաւ։ Դրա հակառակ Թիւրքիայում հայերի դժբախտ կացութիւնը գնալով աւելի և աւելի վատթարացաւ։ Հազարաւոր հայեր ոչնչացան կամ մասնակի կոտորածներով մահացան։ Եւ Մուշի դաշտի դէպքերը անցեալ յունիս ամսին վերստին բաց արին 1894—95—96-ի ջարդերի շրջանը։

„Նորին Սրբութիւն Ամենայն Հայոց կաթողիկոսը, Մկրտիչ Ա-ը, երեսուն տարուց յետոյ գալիս է խնդրելու քաղաքակիրթ պետութիւնների արդարադատութիւնն ու գթութիւնը։ Այսօր խոր ծերութեան մէջ նա չէ կամենում թողնել աշխարհը առանց կատարելու այս գերագոյն պարտքը դէպի իւր ժողովուրդը"։

ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԹԻՒՃԵԱՆ
Արեւմ. Եւրոպայի Հայոց հոգեւոր պետ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ
Յ. ՇԱՀՆԱԶԱՐ

Հայ պատգամաւորութիւնը այս գրաւոր դիմումը յանձնել է Անգլիայի, Ռուսիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Միացեալ-Նահանգներու և Աւստրօ-Հունգարիայի ներկայացուցիչներին, խնդրելով միաժամանակ առանձին ունկնդրութիւն նաև բերանացի կերպով հայ ժողովրդի անտանելի կացութիւնը ներկայացնելու համար։

Հայ պատգամաւորները կաթողիկոսի առանձին հրահանգով նաև խնդրել են Պարսկաստանի ներկայացուցչի բարոյական աջակցութիւնը, ի նկատի ունենալով պարսից Շահերի մշտական և անփոփոխ բարեացակամ տրամադրութիւնը դէպի հայ ժողովուրդը։

Միաժամանակ հայասէրների պատգամաւորութիւնը իր կողմից ներկայացրել է կօնգրէսի կարևոր անդամներին մի գրութիւն, կցելով նրան վերջին ժամանակները Հայաստանում կատարուած սարսափների մի փաստաթուղթ։ Ահա այդ գրութիւնը։

Պ. պատգամաւոր!

„Ամերիկայի, Եգիպտոսի, Պարսկաստանի և Բուլղարիայի քառասուն քաղաքների հայ գաղութները մեզ խնդրել են խաղաղութեան համար Հաագա համախմբուած քաղաքակիրթ պետութիւնների ներկայացուցիչների առաջ բերել այն բողոքները, որ Թիւրքիայի դժբախտ հայ ժողովուրդը, ջարդերի, բռնութիւնների ենթակայ, քաղցով ու կարիքով ջնջման մատնուած, չէր կարող ուղղակի ներկայացնել։ Այս իսկ ժամին երբ Էջմիածնի կաթողիկոսի իրաւասու ներկայացուցիչները երեսուն տարուց յետոյ վերանորոգում են այն գիմումը, որ արուեց Բերլինի կօնգրեսի անդամներին. մենք կարծում ենք, որ արդարև մեր պարտքն է հրաւիրել ձեր բոլոր բարեացակամ ուշադրութիւնը մի խաղաղասէր և աշխատաւոր ժողովրդի ծանր վիճակի վրայ, որ արդիւնք է եւրոպական վեց պետութիւնների հանդիսաւոր կերպով ստորագրած վերջին դաշնագրի չիրագործելուն։

Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը աւելի ևս վճռական քան Սան-Ստեֆանօի 16-րդ յօդուածը պարտաւորում է որոշ կերպով ստորագրող պետութիւններին։ (Մէջ է բերում 61-րդ յօդուած)։

Արդ՝ ո՛չ միայն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը մեռած տառ է մնացել, այլ և 1894 – 96 թուերին երեք հարիւր հազար հայեր անդէն և անպաշտպան կոտորուեցին։ Այս նոզկալի ջարդերի շրջանում պետութիւնները իրենց 1895 թ մայիս 11-ի մեմօրանդումով յիշատակում էին այն անհրաժեշտ ռէֆորմները, որոնք առանց վնասելու թիւրքական կայսրութեան ամբողջութեանը, երաշխաւորում էին հայերին տարրական ապահովութիւն կեանքի, պատուի և կայքի։ Այս մեմօրանդումը որի խմբագրութեանը մասնակցել է ինքը Հաագայի ներկայ կօնգրեսի նախագահը, որպէս Պօլսի ռուսաց դեսպան, չունեցաւ պաշտօնական կիրառութիւն ինչպէս և Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը։ Սրան կից փաստերը, վերցրած հարուստ թղթակցութիւններից, ձեզ կը ծանօթացնեն աւելի լաւ քան պերճ խօսքերը, թէ ինչ վիճակի մէջ է հայ ժողովուրդը քսան ինը տարի յետոյ այն օրուանից, երբ եւրոպական պետութիւնները աշխարհի առաջ նրան խոստացան իրենց հովանաւորութիւնը։ Մեծ ջարդերին հետևեց հետևողական ճնշման սիստէմը. նոյնիսկ գիւղից գիւղ գնալու արգելքներ, հարկերի հաւաքում անձերի վրայ բռնանալով, հայերի հողազրկումն յօգուտ իրենց հարևանների կամ գաղթական մահմեդականների, գաղթականութիւն մերթ թոյլատրուած, մերթ արգելուած, աւեր և հրդեհումն գիւղերի և նոյնիսկ մանակի կոտորածներ։

„Հայերի վիճակը երբէք աւելի ողբալի չի եղել քան այսօր։ Եւ եթէ նրանց շուտափոյթ օգնութիւն չի լինի, նրանք կը ջնջուին այն երկրում, ուր ապրում են դարերից ի վեր և ուր նրանք ներկայացնում են եւրոպական քաղաքակրթութիւնն և միտքը։ Ջարդերին հաւասար չափով սովն ու աղքատութիւնը, գաղթականութիւնն ու կրօնափոխութիւնը օժանդակում են թիւրաստիճանական նւազելուն այն ժողովրդի, որ աւելի քան որևէ ժողովուրդ հաւատարիմ մնաց իր ազգայնութեան, իր պատմական եկեղեցուն, իր ազգային աւանդութիւններին և որ պահպանեց այդ բոլորը անձեռնմխելի իր կրած այնքան արշաւանքներից յետոյ արիւնոտ զոհերի գնով։

„Ոչ Բերլինի դաշնագիրն ստորագրող պետութիւնները, ոչ նրանք որոնք մասնակցում են Հաագայի կօնգրեսին, չեն կարող անտարբեր մնալ դէպի մի ժողովրդի ճակատագիր, որի գոյութիւնը պիտի ապահովէին տակաւին չը ջնջուած քաղաքական դաշինքները։ Դա կը լինէր վիրաւորանք մարդկութեան և մի արտասովոր բռնաբարումն միջազգային իրաւունքի։

„Եթէ սակայն արդարութեան այս նկատումները բաւական չեն հիմնաւորելու մեր կոչը, թող թոյլ տրի մեզ նկատել տալ որ՝ յարատև բռնութեան վիճակը թիւրքական պետութեան հայ վիլայէթներում, կազմում է մի նոյնքան յարատև վտանգ աշխարհի խաղաղութեան համար, այնպիսի միջազգային բարդութիւններ կարող են ծագել այդ դրութիւնից, որ առաջ կը գայ եւրոպական ընդհանուր պատերազմ։ Ձեր բարձը իմաստութիւնը, որքան և ձեր արդարադատութեան զգացմունքը կը պաշպանի ձեր առաջ մի փոքրիկ ժողովրդի դատը, որ այլ յանցանք չունի, բայց եթէ իր խաղաղասիրութիւնը, արևմտեան քաղաքակիրթութեան իր ճաշակը, որով նա կարողացել է վաստակել Բերլինի դաշնագիրն ստորագրող վեց մեծ պետութիւնների ցնորդ ապարդիւն մնացած համակրանքը։

„Մենք հաւատում ենք, որ անօգուտ տեղը չենք դրած լինի ձեր առաջ հայերի պահանջների իրաւական հիմունքները՝ 61-րդ յօդուած 1878 թ. յուլիս 23 և մայիս 11, 1895 թուի մեմօրանդումը, ինչպէս և անօգուտ տեղը յայտարարած չենք լինի, թէ՝ որպէս եւրոպական վեց մեծ պետութիւններից մէկի բաղաքացիներ, ինչ խորունկ կսկիծով ենք զգում մեզ յանցակից և պատասխանատու մի անիրաւութեան, այսքան երկարատև և այս աստիճան աղէտաբեր Եւրոպայի պատուի և խաղաղութեան համար։

ՎԼԻԿՏՕՐ ԲԵՐԱՐ
ԱՆԱՏՕԼ ՖՐԱՆՍ
ՖՐԱՆՍԻՍ ԴԸ-ՊՐԵՍԱՆՍ
ՊԻԷՐ ՔԻՅԱՐ

Մեծ պետութիւնների ներկայացուցիչները, ի պատասխան այս գրութիւնների, շտապում են նամակներով հաղորդել հայ պատգամաւորութեան, թէ ընդունել են նրանց դիմումը, բայց յայտնել են, որ չը պիտի կարողանան խնդրուած ունկնդրութիւնը շնորհել, որովհետև հայկական հարցի քննութիւնը, ևս առաւել լուծումը իրենց իրաւասութիւնից բարձր է։ Բոլորի փոխարէն սակայն՝ կօնգրեսի նախագահ պ. Նելիդով պաշտօնական ունկնդրութիւն է շնորհել հայ պատ-

գամաւորներին, որոնք և այսպիսով հնարաւորութիւն են ունեցել գրաւորից դուրս՝ բերանացի նկարագրել թիւրքահայ ժողովրդի անտանելի կացութիւնը և խնդրել Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածին, 1895 թւի մեմօրանդումի անյապաղ գործադրութիւնը որպէս միակ դարման մարտիրոսուղ ժողովրդի փրկութեան։ Նելիդով՝ ի պատասխան այս դիմումի յայտնել է, որպէս նախագահ, թէ հայկական հարցը միանգամայն դուրս լինելով կոնգրեսի ծրագրի սահմաններից, չը պիտի կարողանայ քննութեան առարկայ դառնալ, ինչպէս և բոլոր նման հարցերը, որոնց համար նոյնպէս դիմումներ են եղել, աւելացրել է Նելիդով։ Հայ պատգամաւորները նկատել են տուել, եթէ հայկական հարցի միջազգային բնաւորութիւնը դաշնագրերով հաստատուած ինքնին արդէն, մի խոշոր հանգամանք է որ նրան առանձին տեղ է տալիս և նա կարող է և պէտք է որ մի այսպիսի միջազգային ժողովի քննութեան առարկայ դառնայ։ Նելիդովի պատասխանը եղել է նոյնը՝ „հայկական հարցը դուրս է կոնգրեսի ծրագրից“։

Այս վճռական մերժման առաջ հայ պատգամաւորները պէտք են համարել մի երկրորդ դիմումն անել մեծ պետութիւնների ներկայացուցիչներին բողոքելու համար կոնգրեսի բռնած ընթացքի դէմ և շեշտելու հայկական դատի միջազգային բնաւորութիւնը, որ բղխում է Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածից ինչպէս և 1895 թւի մեմօրանդումից։ Ահա այդ բողոքը.

ՀԱԱԳԱ, 12 օգոստոսի 1907 թ.

„Պ. Պատգամաւոր

Հաագայի երկրորդ կոնգրեսի

Նորին Սրբութեան Ամենայն Հայոց կաթողիկոսի պատւիրակները միանգամայն գոհ այն անձնական համակրանքներից, որ պ. պ. պատգամաւորներն արտայայտեցին դէպի նրանց առաքելութիւնը և հայ ժողովուրդը, չեն կարող սակայն հեռանալ Հաագայից առանց վկայելու (affirmer) այն իրաւունքները, որ Թիւրքիայի հայ ժողովուրդը ունի միջազգային դաշնագրով։

Հաագայի երկրորդ կոնգրեսը, իր նախագահի բերանով և բազմաթիւ պատգամաւորների նամակներով հրաժարւեց մեզ լսել առաջ բերելով իրաւասութեան խնդիրներ, որ մենք չենք կարող համարել հիմնաւոր։

Հայերի դրութիւնը Թիւրքիայում չի կարող թիւրքական ներքին քաղաքականութեան խնդիր նկատւել։ Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով պետութիւնները այդ խնդիրը դարձրել են միջազգային և 1895 թ. մեմօրանդումով նրանց դեսպանները վերստին յայտարարել են հայկական խնդրի այդ բնոյթը։ Միւս կողմից ամեն ոք գիտէ, որ Թիւրք կառավարութեան կազմակերպած ջարդերը հայկական գաւառներին հասցրել են և հասցնում են ամենավայրագ պատերազմների չարիքները և որ նոյնիսկ Եւրոպայի խաղաղութիւնը երբէք չի կարող ապահով լինել քանի Փոքր-Ասիայի յուզումները կսպառնան իրար դէմ անել պետութիւնների բանակները։

Այս պարագաներում մեզ անընդունելի է թւում, որ խաղաղութեան միջազգային կոնգրեսը կարողանայ հրաժարւել հայկական հարցի որևէ քննութիւնից, եթէ ինչպէս ցոյց են տալիս նորագոյն փաստերը սկզբունքներ մշակելուց և պարզ ցանկութիւններ արտայայտելուց յետոյ կոնգրեսը մտածում է անցնել վերջապէս միջոցներին և սկզբունքները կիրառնելուն“։

ԳԷՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԹԹԻՃԵԱՆ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ
Յ. ՇԱՀՆԱԶԱՐ

Սրանից դուրս հայ պատգամաւորները մի բողոքով դիմել են նաև քաղաքակիրթ աշխարհի հասարակաց կարծիքին։

Ահա այդ բողոքը, որ լոյս տեսաւ միջազգային մամուլի կարևոր և շիտակ օրգաններում։

„Ամենայն Հայոց կաթողիկոսի պատւիրակները՝ Գէորգ Եպիսկոպոս Իւթիւճեան, Ա. Ահարոնեան, Յ. Շահնազար, յանուն թիւրքահայ ժողովրդի, դիմեցինք Հաագայի երկրորդ կոնգրեսին խնդրելով հայկական հարցի քննութիւնը։

„Կոնգրեսն իր նախագահի բերանով հրաժարւեց կատարել մեր խնդիրք առաջ բերելով իրաւասութեան խնդիրներ, որ մենք չենք կարող համարել հիմնաւոր՝ ի նկատի ունենալով Բերլինի կոնգրեսի 61-րդ յօդուածը և 1895 թ. մեմօրանդումը։ Արդ՝ մենք բողոքում ենք այդ մերժման դէմ, որ գալիս է միանգամայն հակասելու նոյնիսկ կոնգրեսի բուն նպատակին։

„Մենք յիշեցնում ենք, որ մինչդեռ պետութիւնների դէպի հայերը յանձն առած երաշխաւորութիւնները մնում են մեռած տառ, թիւրք կառավարութիւնը կազմակերպած ջարդերով, բռնի դաւանափոխութեամբ և գաղթով աւերում և ամայացնում է Հայաստանը։

„Հանդէպ այս անիրաւութեան դէպի մի ժողովուրդ, որ պահանջում է միայն իր տարրական իրաւունքները Եւրոպայից ճանաչւած, մենք կոչումն ենք անում քաղաքակիրթ աշխարհի խղճին և թո՛ղ նա դատէ, թէ հայկական հարցի խաղաղ լուծման համար արած ջանքերի այսպիսի անյաջողութիւնը, աւելացնելով մարտիրոս ժողովրդի յուսախաբութիւնը, արդեօք վերջիվերջոյ չի խախտի խպառ այդ ժողովրդի հաւատը դէպի խաղաղ միջոցների արժէքը“։

Այսպէս վերջացաւ այն դիմումը, որ հայ ժողովրդի որոշ շրջաններում աւելի կամ պակաս հաւանական յոյսերի հեռանկար էր զարթեցրել։ Եւրոպական դիւանագէտները, ռուսական ժողովուրդները մորթոտոց ցարի հրաւէրով Հաագա համախմբւած՝ չը կամեցան կամ չը կարողացան արդարութեան և իրաւունքի մի հատիկ գործ կատարել, որ կարող էր նրանց դատարկ, անպտուղ և կեղծաւոր ժամանցի վիհը մի փոքր լցնել։ Նրանք չը կամեցան զբաղւել հայկական հարցով, որ արդարութեան, իրաւունքի, մարդասիրութեան և մանաւանդ խաղաղութեան հարց է և այժմ յանուն խաղաղութեան շարունակում են պատերազմի աւելի կատարեալ ձևերի վրայ ամօթալի ճառեր արտասանել։

Մեծ պետութիւնների դիւանագիտութիւնը դարձեալ մի անգամ հրաժարւեց հայկական հարցի խաղաղ լուծումից, և այսպիսով էլի մի անգամ ապացուցեց իր խայտառակ անանկութիւնը, ինչպէս և այն, որ մինչև մեծ պետութիւնների, և նրանց հովանաւորած կապիտալի շահերը լուրջ վտանգի չ'ենթարկւին, նա չը պիտի ճանաչի տառապող ժողովուրդների իրաւունքները։

Յեղափոխականներ լինելով հանդերձ, մենք խոր-

շում ենք թէկուզ մի հատիկ կաթիլ արիւնից։ և մենք առաջինը կը լինէինք ողջունելու հայկական հարցի խաղաղ լուծումը թէկուզ խիստ սահմանափակ ձևով։ Ահա թէ ինչու, մենք միշտ կողմնակից ենք այնպիսի դիմումների, այնպիսի քայլերի, որոնք գալիս են հեշտացնելու մեր հարցի խաղաղ լուծման ճանապարհը։ Եւ մի ճակատագրական հետևողականութեամբ այդ դիմումները տարաբախտաբար միշտ ընդհարւում են դիւանագէտների անսիրտ, քարացած անտարբերութեանը։

Եւ թող այսուհետև չը մեղադրեն, եթէ խաղաղ միջոցներից, խնդիրներից, աղերսներից իսպառ յուսախաբ՝ տարաբախտ հայ ժողովուրդը այլ և աւելի հաստատ միջոցների դիմի իր փրկութեան համար։

VII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԷՍԸ

Հ. Յ. Դաշնակցութեան IV Ընդհանուր ժողովը միաձայն որոշել էր մասնակցել այսուհետև սոցիալիստական միջազգային կոնգրէսներին, իբրև հայ աշխատաւորութեան շահերի թարգման ու պաշտպան, իբրև մի հատուածը համաշխարհային սոցիալիստական մեծ բանակի։ Իր թէորիական աշխարհայեացքով, իր ժողովրդական բնաւորութեամբ, իր վարած կռիւների բովանդակ ոգով ու նպատակով, նա վաղուց արդէն իրաւունք էր վաստակել՝ հիւրընկալելու Ինտերնացիոնալի մէջ, բայց կլանուած գործնական տենդային աշխատանքով, ստիպուած միշտ հսկելու պարտքի արիւնոտ դաշտում՝ նա շատ քիչ ժամանակ ունէր նուիրելու այդ կարգի զբաղմունքներին։ 1896-ին միայն „Դրօշակի“ խմբագրութիւնը ուղարկել էր իր պատգամաւորի հետ տպուած զեկուցում Լոնդոնի սոցիալիստական կոնգրէսին, ուր նա համառօտակի պարզում էր կազմակերպութեան կերպարանքը, նրա գործունէութիւնը Թիւրքաց-Հայաստանում։

Վերջին երեք տարւայ ընթացքում Բրիւսէլի սոցիալիստական բիւրօն, շատ թէ քիչ մանրամասն տեղեկանալով մեր գործի մասին, ծանօթանալով մեր սոցիալիստական աշխարհայեացքի հետ, մտել էր մեզ հետ յարաբերութեան մէջ և հաղորդում էր մեզ սոցիալիստական կուսակցութիւնների աշխարհում կատարւող խոշոր իրողութիւնները։ Իսկ սրանից մի երկու տարի առաջ, համառուսական մեծ յեղափոխութեան սկզբում, գերմանական սոցիալ-դէմոկրատիան հանգանակութեան ձեռնարկելով յօգուտ Ռուսաստանի սոցիալիստական կուսակցութիւնների, յատկացրել էր գումարի մի մասը „Դաշնակցութեան“, իբրև մի մարմնի, որ կանգնած է սոցիալիստական պայքարի հողի վրայ։ Այդպիսով անցեալում, մեր կազմակերպութիւնը որոշ չափով վայելել էր արդէն միջազգային համերաշխութեան հաւաստիքներ։ Մնում էր անել վճռական քայլը—գրւել պաշտօնապէս Ինտերնացիոնալի մէջ։

Եւ այդ քայլն էլ արւեց. „Դաշնակցութիւնը“ ընդունւեց սոցիալիստական կուսակցութիւնների շարքը, հակառակ մեր հայրենակից ռուս ու հայ սոցիալ-դէմոկրատների ճիգերին, բողոքներին։

Շտուտգարտի միջազգային սոցիալիստական կոնգրէսին ուղարկւեցին երեք դաշնակցական պատգամաւորներ, մէկը կուսակցութեան կողմից՝ վճռող ձայնով, միւս երկուսը կովկասեան մարմինների կողմից, խորհրդակցական ձայնով։ Իրօք „Դաշնակցութեան“ Ռուսաստանի հատուածն էր կոնգրէսին մասնակցողը և նա մտնում էր մէկ ձայնի իրաւունքով համառուսական սէկցիայի և ռուս սոցիալիստ-յեղափոխական ենթասէկցիայի մէջ։ (Ամբողջ ռուսական սէկցիային տրուած է 20 ձայն, որից 10-ը՝ սոցիալ-դէմոկրատիային, 7-ը սոց.-յեղափոխականներին և 3-ը պրոֆէսիոնալ շէզոք միութիւններին)։

Սոցիալիստական Բիւրոյի ժողովում, օգոստոս 16-ին, խորհրդակցութեան նիւթ եղաւ և Թիւրքաց-Հայաստանի առանձին ներկայացուցչութեան հարցը, որ մեր առաջարկն էր և նպատակ ունէր ստեղծել առանձին հայկական սէկցիա։ Սակայն, քանի որ նոր սէկցիա ստեղծելու հարցը համարւում է ծանրակշիռ ու պատասխանատու և քանի որ մեր առաջարկը գալիս էր յանկարծակի, Բիւրոն որոշեց յետաձգել Ցաճկահայաստանի զատ ներկայացուցչութեան հարցը մինչև իր առաջիկայ նիստը, ուր „Դաշնակցութեան“ պատշաճ մարմինը կը ներկայացնէ մանրամասն զեկուցագիր տաճկահայկական կազմակերպութիւնների մասին, և սոցիալիստական բիւրոյի անդամները վճիռ կը տան արդէն *en connaissance de cause* (իրերին տեղեակ)։

*

„*Liederhalle*“-ի հոյակապ դահլիճում, օգոստոսի 18-ին տեղի է ունենում կոնգրէսի բացումը։ Դահլիճի պատերը զարդարւած են գոյնզգոյն ծաղիկներով, որոնց միջից երևան են գալիս սոցիալիստական հռչակաւոր մտածողների պատկերները,—Մարքսի, Լասսալի և ուրիշների։ Պատգամաւորները, թւով հազարի չափ, բաժանւած ըստ ազգութիւնների ու պետութիւնների, շարւած են երկայնաձիգ սեղանների շուրջը։ Գերմանացիք նստած են շուրջանակի. ապա գալիս են անգլիացիք, ֆրանսիացիք, ամերիկացիք, իտալացիք, շվեյցարացիք, աւստրիացիք, սպանիացիք, շվէդները, նորվեգիացիք, բելգիացիք, բուլգարներ, սերբեր, ռումէններ, լեհեր և այլն։ Կենտրօնում՝ երկու մեծ սեղաններ յատկացրւած են ռուսական սէկցիային,—սոցիալ-դէմոկրատներին, բունդին, սոցիալիստ յեղափոխականներին, դաշնակցականներին (թւով մօտ 50 պատգամաւոր)։ Կան պատգամաւորներ նաև Կանադայից, Բոլիվիայից, Արգենտինայից, Աւստրալիայից, Եգիպտոսից։ Ընդամենը ներկայ են 25 ազգութիւն։

Վանդերվելդը (բելգ. սոց. առաջնորդ), իբրև նախագահ Միջազգային Սոցիալիստական Բիւրոյի, բաց է անում կոնգրէսը և խօսքը տալիս է Բեբելին։ Գերմանական սոց.-դէմոկրատիայի ծերունի, բայց միշտ երիտասարդ պարագլուխը բեմ է գալիս բուռն ծափահարութիւնների մէջ և „բարի գալստի“ մի քանի ոգևորիչ խօսքերից յետոյ սկսում է պատմել սոցիալիզմի աջողութիւնները վերջին երեք տարւայ ընթացքում Ամստերդամի կոնգրէսից ի վեր, այլևայլ երկրներում։

Ֆրանսիայում սոցիալիստական ֆրակցիաները միացան և ընտրողական բուռն պայքարի մէջ միացեալ սոց. կուսակցութիւնը կարողացաւ հասցնել իր ներկայացուցիչների թիւը պարլամենտում 37-ից մինչև 54։

Անգլիայում առաջին անգամը բանուորական կուսակցութիւնը իբրև ինքնուրոյն, անկախ ոյժ, դէմ դուրս եկաւ բուրժուազական կուսակցութիւններին, պարլամենտական ընտրութիւնների միջոցին և ունեցաւ փայլուն, անսպասելի աջողութիւն. առաջին անգամը անգլիական պրոլետարիատի 37 պատգամաւորները մտան պարլամենտ, իբրև ուրոյն մի կազմակերպութիւն։

Ֆինլանդիայում, ֆինն աշխատաւոր ժողովուրդը, նուաճելով ընդհանուր ընտրողական իրաւունք, կարողացաւ ղրկել իր ազգային պարլամենտը՝ ոչ միայն զօրեղ արական ներկայացուցչութիւն, այլ և սոցիալիստ կանանց։

Աւստրիայում տեղի ունեցաւ չբ տեսնուած պայքար և սոցիալիստական մեծ յաղթանակ։ Այնտեղ ևս աշխատաւոր ընդհանրութիւնը իր ազգու և ներդաշնակ ընթացքով նուաճեց ընդհանուր ընտրողական իրաւունք և վերջին ընտրութիւններին պարլամենտ ղրկեց 87 սոցիալիստ պատգամաւորներ—ամենամեծ սոցիալիստական ներկայացուցչութիւնը ամբողջ աշխարհում։

Գերմանիայում ևս սոցիալիստական կուսակցութիւնը աճել է, ասում է Բէբէլ. թէև սոց. պատգամաւորների թիւը Ռայխստագի մէջ 79-ից իջել է 43-ի, սակայն սոց. ընտրողների թիւը ամբողջ Գերմանիայում բարձրացել է 3 միլիոնից մինչև $3^1/_4$ միլիոն։ Պարլամենտական ֆրակցիայի կրճատուիլը Բէբէլ վերագրում է այն հանգամանքին, որ ընտրութիւնների ընթացքում բոլոր գոյների բուրժուազական կուսակցութիւնները միացել են սոցիալ-դէմոկրատիայի դէմ։ Աճել է հագին չափով պրոֆէսիոնալ ընկերութիւնների թիւը Գերմանիայում։ 1900-ին նրանք հաշուում էին 700,000 անդամ, իսկ այսօր—1,800,000։

Վանդերվելդ նորից խօսեց և ծանրացաւ գլխաւորապէս Ռուսաստանի յեղափոխութեան վրայ։

„Մեր սրտագին եղբայրական ողջոյնն ենք յղում ազատութեան հերոս-մարտիկներին, որոնք կուում ու տնքում են այնտեղ, արևելքում, ցարական բէժիմի տակ։ Քանի՞ անգամ մեր սրտերը բաբախել են նրանց համար և քանի՞ անգամ մենք յուսացել ենք, թէ ահա արդէն յաղթութիւնը մօտ է։ Մեր յոյսերը դրժբախտաբար, ամբողջովին չ'իրականացան։ Ցարիզմը ըստացել է մահուիթ հարուածը, բայց դեռ չի մեռել։ Սական մենք հաւատո՞վ ենք նայում ապագային։ Ռուսական յեղափոխութիւնը 3 տարուայ կեանք ունի միայն, մինչդեռ ֆրանսիականը տևել է 1789-ից մինչև 1815 թ.։ Մենք յուսով ենք, որ Ռուսաստանի յեղափոխութիւնը չը պիտի լինի սոսկ բուրժուա-դէմոկրատական, այլ որ նա կը կրէ իր վրայ սոցիալիստական պրոլետարիատի դրոշմը“։

Հետևեալ օրը, օգոստոս 19-ին, տեղի ունեցան Կանշտատում բացօդեայ միտինգներ ու ցոյցեր, ուր ամենափայլուն սոցիալիստ հռետորները—Ժօրէս, Բէբէլ, Վանդերվելդ և ուրիշներ—պատրաստուած ամբիոններից խօսում էին հսկայական բազմութեան առաջ, խօսում էին պատերազմի դէմ, խաղաղութեան համար, հռչակում էին աշխատաւոր դասակարգի աջողութիւնները, սոցիալիզմի գալոց յաղթանակը... Բազմութիւնը խրուսնում է, ի հարկէ, գլխաւորապէս Ժօրէսի ամբիոնի շուրջը, տեսնելու համար աշխարհի ամենամեծ հռետորին, լսելու համար նրա բոցավառ ու մոլեգին խօսքը, որ հնչում էր անսովոր ուժով, ֆրանսերէն և ապա գերմաներէն. Վիւրտեմբերգի գողտրիկ մայրաքաղաքը առաջին անգամն էր ականատես լինում այդպիսի հոյակապ միտինգների։

Օգոստոսի 20-ին, վերջապէս սկսւում է կանոնաւոր աշխատանքը, մասնաժողովների մէջ։ Օրակարգում դրուած են մի շարք կարևոր հարցեր, որոնց լուծումը պիտի տայ կօնգրէսը.

1) Միլիտարիզմ և միջազգային ընդհարումներ
2) Գաղութային քաղաքականութիւն
3) Սոց. կուսակցութիւններ և արհեստակց. ընկերութիւններ.
4) Արտագաղթում և ներգաղթում
5) Կանանց իրաւունքներ։

Առաջին հարցն էր ամենահրատապը և նա բևեռել էր իր վրայ ընդհանուր ուշադրութիւն։ Հրապարակի վրայ դրուած էին մի քանի բանաձևեր, բէզոլիւցիաներ—Հերվէյի, Ժօրէս-Վալեանի և Բէբէլի։ Միլիտարիզմի վերաբերեալ հիմնական սկզբունքները վաղուց արդէն միաձայն ընդունուած են բոլոր երկրների սոցիալիստական կուսակցութիւնների կողմից, բոլորն էլ համաձայն են, որ առաջ տարի միջազգային համերաշխութեան պրօպագանդը, որ իւրաքանչիւր ազգ պաշտպանէ իր ինքնուրոյնութիւնը, որ կանգուն բանակները վերանան և նրանց տեղը ստեղծուին բուն ժողովրդական բանակներ կամ միլիցիաներ։ Տարաձայնութիւնը ծագում է այն չափազանց բարդ ու փափուկ խնդրի դիմաց, թէ ի՞նչ միջոցներով պատերազմների առաջն առնել, ինչպէ՞ս կանխել զինուած ընդհարումները ազգերի միջև։

Հերվէն, ֆրանսիացի յայտնի հակամիլիտարիստը, առաջարկում է, որ պատերազմի դէպքում զինուորները գործադուլ անեն, կամ աւելի ճիշտ՝ կուադուլ (grève militaire)։ Հերվէն ոչ մի արժէք չի տալիս այժմեան հայրենիքին և նրա համար միևնոյն է՝ Ֆրանսիայի գլխին նստած լինի մի Ֆալիէր, թէ մի Վիլհէլմ II։ Այդ ծայրայեղ ու տարօրինակ հասկացողութիւնների դէմ բաւական ժամանակից ի վեր կուում է ֆրանսիական սոցիալիստների մեծամասնութիւնը, մասնաւորապէս Ժօրէսը, որ մի քանի անգամ ջերմ, հայրենասիրական ճառեր է արտասանել նոյնիսկ պարլամենտում և շեշտել է, որ Ֆրանսիան, ինչպէս ամեն մի ուրիշ ազգութիւն, իրաւունք ունի և պարտաւոր է անխախտ պահել իր ինքնուրոյնութիւնը, որ արտաքին որևէ յարձակման ժամանակ սոցիալիստները պարտաւոր են ոչ թէ կազմակերպել զինուորների կուադուլ, այլ զէնքը ձեռին օգնութեան պիտի գան վտանգուած հայրենիքին։

Սակայն վերջերս Ժօրէսը զգալի զիջումներ արեց Հերվէյիզմին և Նանսիում գումարուած ֆրանս. սոցիալիստների համաժողովում ընդունեց մեծամասնութեամբ հակամիլիտարիստական մի բանաձև, Հերվէյական ոգով ներշնչուած։ Այդտեղ ասուած է, որ պատերազմը արգելելու համար սոցիալիստները կը դիմեն

բոլոր հնարաւոր միջոցների, ընդհանուր գործադուլի և նոյնիսկ ապստամբութեան։

Նոյն ոգով էր խմբագրուած և Շտուտգարտում դրուած ֆրանսիական բեզօլիւցիան։ Առհասարակ ֆրանսիացիք պահանջում են, որ այժմից արդէն նախորոշուին այն կոնկրետ միջոցները, որոնց պիտի դիմեն զանազան երկրների սոց. կուսակցութիւնները՝ պատերազմի առաջն առնելու համար։

Գերմանական սոցիալ-դէմոկրատիան միանգամայն հակառակ է այդպիսի նախորոշման։ Բէբէլի և Ֆոլմարի բերանով նա յայտարարեց, որ կարակի մերժում է թէ Հերվէյի հակազգային թէօրիաները և թէ Վալեանի ու Ժօրէսի բանաձևը. գերմանական սոցիալ-դէմոկրատիան առանց քաշուելու հասկացրեց Բէբէլի հեղինակաւոր խօսքով, որ եթէ նա ֆրանսիական սոցիալիստների պէս այժմից յայտարարէ պատերազմի միջոցին գործ դնելիք իր միջոցները, ապա Վիլհելմ II-ի կառավարութիւնը խիստ հալածանքներ կը սկսէ սոց.-դէմոկրատիայի դէմ։ Բէբէլի և մանաւանդ Ֆոլմարի ճառերից պարզ երևում էր, որ Գերմանիայի սոցիալ-դէմոկրատները առհասարակ շատ աւելի ազգայնական են, քան ֆրանսիական սոցիալիստները, որ եթէ նոյնիսկ մի գեղեցիկ օր Գերմանիան դրդէ ու նախաձեռնէ պատերազմ Ֆրանսիայի դէմ,—այդ պարագայում ևս գերմանական սոցիալ-դէմոկրատիան իր մի քանի միլիոն համախոհներով պիտի մտնէ համազգային բանակի մէջ և պիտի գնայ ջախջախելու Ֆրանսիան... պլատոնական մի քանի բողոքներ լսեցնելուց յետոյ։ Այդպէս էր գերմանացի հռետորների ընդունած տոնը, որ ի զուր Բոզա Լիւքսեմբուրգ աշխատեց մեղմել իր մի կորովի ճառով, ուր խորհուրդ էր տալիս սրել, ուժեղացնել Բէբէլի բեզօլիւցիան։ Այդ վերջինը բաւականանում էր ընդհանուր, անորոշ խօսքերով և ոչ մի կոնկրետ միջոց չէր նախորոշում ապագայի համար։

Բէբէլ և Ֆոլմար խիստ աննպաստ տպաւորութիւն արին իրենց երկչոտ ու օպպորտիւնիստ յայտարարութիւններով և Ժօրէս մի անգամ ևս առիթ ունեցաւ կատաղի ոճով խարանելու գերմանական այդ երկչոտութիւնը, յեղափոխական ոգու, տեմպերամենտի բացակայութիւնը. դահլիճը թնդում էր կրկնակի ու որոտընդոստ ծափահարութիւններից և պատգամաւորների ահագին մեծամասնութիւնը համակրութեան ցոյցեր էր անում մեծ հռետորին։

Ժօրէս-Վալեանի բանաձևը յայտարարում էր.

„Աշխատաւոր դասակարգը բոլոր երկրներում պէտք է իմանայ, որ երբ մի կառավարութիւն սպառնում է մի ուրիշ ազգի անկախութեան, նա դրանով իսկ դուրս է գալիս այդ ազգի դէմ, նրա աշխատաւոր դասակարգի դէմ և ամբողջ միջազգային աշխատաւորութեան դէմ։ Սպառնալիքի տակ գտնուող ազգը և աշխատաւոր դասակարգը հրամայական պարտաւորութիւն ունին՝ պաշտպանելու իրենց անկախութիւնը այդ յարձակումների դէմ և նրանք իրաւունք ունին ամբողջ տիեզերքի աշխատաւոր դասակարգի աջակցութեան վրայ։ Ինքնապաշտպան այդ քաղաքականութիւնը, ինչպէս և սոց. կուսակցութեան հակամիլիտարիզմը հրամայում են, որ մենք սոցիալիստներս պահանջենք զինաթափ անել* բուրժուազիային և զինել աշխատաւոր դասակարգը, ընդհանուր համաժողովրդական զինաւորութիւն մտցնելով“։

Ապա բէզօլիւցիան յիշատակում է Ռուսաստանի յեղափոխութեան բռնկումը, շեշտում է, որ հարևան կայսրութիւնները տրամադիր են օգնութեան գալ նեղն ընկած ցարիզմին, յիշում է կապիտալիստական ու գաղութային (կոլօնեալ) անդադրում ձեռնարկներն ու կողոպուտները և այդ բոլորը ի նկատի առնելով, նա (Ժօրէս-Վալեանի բանաձևը) պահանջում է, որ միջազգային սոցիալիստական բիւրօն և միջպարլամենտական կոնֆէրէնցիան ազդեն պատշաճաւոր հաստատութիւնների վրայ, որպէսզի կարողանան միջազգային մի ընդհարում սպառնալու ժամանակ ձեռք առնել հարկ եղած միջոցները՝ նրա առաջն առնելու համար։

Ահա այդ բանաձևն է, որ ընդունել էր ֆրանսիական սոցիալիստների մեծամասնութիւնը և որ գերմանական սոցիալ-դէմոկրատիան կտրակի մերժեց, պատճառաբանելով, որ այդ տեսակ բանաձևի քուէարկումը կը հրաւիրէր սոցիալ-դէմոկրատիայի վրայ Վիլհելմ-Բիւլօվեան կառավարութեան շանթերը...

Կացութիւնը բաւական փափուկ էր. հակասութիւնը ֆրանսիական և գերմանական բանաձևերի մէջ—խիստ աղաղակող։ Պէտք էր ելք գտնել, և դրա համար աշխատեցին Վանդերվելդ և Ադլեր։ Երկու ըստ երևոյթին անհաշտելի բանաձևերից կազմուեց երրորդը, խիստ ձգձգուած ու առաձգական, որ և ընդունուեց միաձայն կոնգրէսից։

Պատերազմների առաջն առնելու համար, այդ երրորդ բանաձևը առաջարկում է.

„Եթէ որևէ պատերազմ սպառնայ բռնկուել՝ ապա շահագրգռուած երկրների մէջ աշխատաւոր դասակարգի և նրա պարլամենտական ներկայացուցիչների պարտականութիւնն է՝ միջազգային բիւրօյի աջակցութեամբ ամեն ջանք թափել պատերազմը արգելելու համար, գործ դնել այն բոլոր միջոցները, որոնք կը թուան նրան ամենից աւելի նպատակայարմար և որոնք տարբերուում են, բնականաբար, նայած այդ երկրների դասակարգային կռիւների սաստկութեան և ընդհանուր քաղաքական կացութեան։

„Այն դէպքում, երբ ընդհարումը այնուամենայնիւ տեղի կունենայ, նրանք պարտաւոր են միջամտել, թէ պատերազմը շուտով դադարեցնելու համար և թէ բոլոր ուժով շահագործելու համար այն տնտեսական ու քաղաքական ճգնաժամը, որ այդ պատերազմը առաջ կը բերի. այդպիսով նրանք կը յուզեն ժողովրդական խորին շերտերը և կը փութացնեն բուրժուազիայի տիրապետութեան անկումը“։

Տարտամ ու առաձգական այդ բանաձևը ընդունեց միահամուռ կերպով։ Նրան ձայն տուեց նոյնիսկ Հերվէն։ Դարձեալ, անշուշտ, իւրաքանչիւր երկրի սոցիալիստները կը շարունակեն ունենալ իրենց յատուկ տաքտիկը, համաձայն իրենց պայմաններին, ցեղական տեմպերամենտին և այլն։

Պատերազմի միջոցին, ասում է բանաձևը, սոցիալիստ կուսակցութիւնները կը դիմեն բոլոր միջոցներին, որոնք „տարբերուում են, նայած զանազան երկրների դասակարգային կռիւների սաստկութեան և ընդհանուր քաղաքական կացութեան“։ Այդ վերջին դարձուածը իր անորոշութեամբ թոյլ կը տայ գերմանական սոցիալ-դէմոկրատիային՝ պատերազմի ժամանակ սեղմել իր շարքերը և զէնքը ձեռին, բուրժուա-իւնկերական բանակի մէջ ձուլուած, արշաւել թշնամու, դիցուք Ֆրանսիայի

* „Զինաթափ“ բառը այստեղ յարաբերական հասկացողութիւն է, ընդհանուր, համաժողովրդական (կամ համազգային) զինաւորումը նշանակում է բուրժուազիայի յարաբերական զինաթափում։

դէմ և սոցիալ-դէմոկրատիան կը պատճառաբանէ, որ ինքը յարմարւում է իր երկրի դասակարգային կոիւների ոչ շատ սաստիկ բնաւորութեան։ Ֆրանսիական հերվէյիստներին՝ այդ նոյն դարձուածը իրաւունք կը տայ, հաւատարիմ մնալ իրենց դաւանած սկզբունքին և պատերազմը հրատարակելու վայրկեանին քարոզել ընդհանուր զինուորական գործադուլ։

Յոյս կայ, սակայն, որ հերվէյիստները իրենց այլանդակ հասկացողութիւններով հայրենիքի և նրա պաշտպանութեան մասին, միշտ էլ կը մնան աննշան փոքրամասնութիւն, և որ գերմանական կամ որևէ արտաքին վտանգաւոր յարձակման դիմաց՝ ֆրանսիական սոցիալիստները իրենց ճնշող մեծամասնութեամբ կերթան պաշտպանելու Մեծ Յեղափոխութեան հայրենիքը և թոյլ չեն տայ, որ նրա անկախութիւնը վտանգի...

*

Տաք վիճաբանութեան նիւթ եղաւ մասնաժողովի մէջ նաև գաղութային քաղաքականութեան հարցը (*Kolonialpolitik*)։ Մեծամասնութիւնը ի դէմս Վան-Կոլի (Հոլլանդ. սոց. կուս. պարագլուխ), Էդուարդ Բերնշտայնի, Դաւիդի և այլոց՝ առաջարկում էր, որ սոցիալիստները բացարձակապէս ժխտողական դիրք չը բռնեն կոլոնիական քաղաքականութեան դէմ, քանի որ լաւ ռէժիմի տակ կոլոնիաները կարող են շատ օգտակար լինել քաղաքակրթութեան առաջադիմութեան համար, աշխատաւոր դասակարգերի ու սոցիալիզմի համար։ Փոքրամասնութիւնը առաջարկում էր միանգամայն և անպայման վճռական ճանաչել կոլոնիական քաղաքականութիւնը և բաւականանալ միայն բողոքներ հնչեցնելով՝ գաղութներում կատարւող բռնութիւնների դէմ։ Կոնգրէսը ընդունեց 128 ձայնով ընդդէմ 107-ի՝ փոքրամասնութեան բանաձևը, որին ձայն տուեց և համառուսական սէկցիան։

Այնուհետև պատգամաւորները քննութեան ենթարկեցին երրորդ ծանրակշիռ խնդիրը՝ թէ ի՞նչ տեսակ յարաբերութեան մէջ պէտք է լինեն զանազան երկրներում սոց. կուսակցութիւնները և պրոֆէսիոնալ միութիւնները։ Ճնշող մեծամասնութեամբ կոնգրէսն ընդունեց Ամերիկայի սոցիալիստների բանաձևը, ուր ասուած է, թէ աշխատաւոր դասակարգերի ազատագրութեան գործում Սոցիալիստ կուսակցութիւնը և Պրոֆէսիոնալ սինդիկատները համահաւասար արժէք ունին, որ ազատագրական կռիւ աջողութիւնը կախուած է նրանից, թէ որքան սերտ յարաբերութիւններ կը տիրեն այդ երկու համազօր գործօնների միջև. որ, հետևապէս, կուսակցութիւնը և պրոֆ սինդիկատները պարտաւոր են փոխադարձաբար աջակցութիւն ցոյց տալ և համաձայնութեան գալ կռիւ տաքտիկի վերաբերմամբ, որ կուսակցութիւնը պարտաւոր է նեցուկ լինել պրոֆէսիոնալ միութիւններին, նրանց կռիւ մէջ՝ յանուն աշխատաւորի տնտեսական վիճակի բարելաւման ևայլն։ Այդ բանաձևը, ուրեմն, կտրուկ կերպով մերժում է բանուորական սինդիկատների չէզօքութիւնը, իբրև միանգամայն վնասակար և պահանջում է, որ երկու ուժերը՝ մէկը քաղաքական, միւսը տնտեսական՝ առաջ գնան ձեռք-ձեռքի տուած, ներդաշնակ ջանքերով, յանուն ընդհանուր ազատագրութեան։

Այդ բեզոլիւցիային ձայն տուեց և ռուսական սէկցիան՝ սոց-յեղափոխականները, դաշնակցականները, սոց.-դէմոկրատները և բունդը։

Փափուկ հարցերից էր նաև բանուորական գաղթականութեան հարցը։ Հիւս. Ամերիկայի պատգամաւորը պատմում էր, թէ ինչպէս չինացի բանուորների հոսանքը դէպի Ամերիկայ անդրադառնում է այդ երկրի աշխատաւորների դրութեան վրայ. չինացիք լինելով յետամնաց ու անգիտակից մասսա, գործիք են ծառայում կապիտալիստների ձեռքին՝ գործադուլները վիժեցնելու համար և իրենք լինելով խիստ սակաւապետ, բաւականանալով չնչին օրավարձով, առհասարակ վտանգաւոր մրցակից են հանդիսանում տեղական գիտակից բանուորներին։ Ուստի Ամերիկայի սոց. պատգամաւորը առաջարկում է, որ սոցիալիստները ձեռք առնեն միջոցներ՝ հովանաւորելու տեղական բանուորներին ուրիշ յետամնաց երկրներից եկող գաղթականական հոսանքների դէմ (չինացիների, եապօնացիների, իտալացիների ևայլն)։

Այդ առաջարկին միանում են Աւստրալիայի ու Արգենտինայի պատգամաւորները, որոնք նոյնպէս առաջարկում են հրաժարուել սոցիալիստական սանտիմենտալիզմից և բարձր դասել ամեն պարագայում՝ գիտակից, սոցիալիստ պրոլետարիատի շահերը։

Այդ կարծիքների շուրջը սկսւում է բուռն վիճաբանութիւն։ Առարկում են, որ սոցիալիստը չի կարող այդ տեսակ դիրք բռնել դէպի գաղթական բանուորները, թէկուզ և լինեն նրանք յետամնաց ազգերից և գործիք ծառայեն կապիտալիստներին։ Այդպէս կարող է վարուել միայն նացիօնալիստ կուսակցութիւնը։ Բարձր կուլտուրական երկրներում սոցիալիզմը պիտի աշխատէ կրթել օտար գաղթական բանուորներին, կազմակերպել և դասակարգային գիտակցութեան բերել նրանց։

Այդ մտքով և կոնգրէսը ընդունեց մեծամասնութեամբ մի բանաձև։ Սակայն, դժուար թէ նա ի կատարածուի այն երկրներում, ուր գաղթականութեան հոսանքները ամենից աւելի են զգալ տալիս իրենց բացասական հետևանքը։

Վերջապէս, միաձայն քուէարկւում է մի որոշում՝ կանանց ընտրողական իրաւունքների վերաբերեալ։ Սոցիալիստական կուսակցութիւնները հրաւիրւում են բոլոր երկրներում ամենաեռանդուն պրոպագանդ մղել՝ նուաճելու համար կանանց ընդհանուր ընտրողական իրաւունք։ Այդ պայքարի մէջ սոցիալիստ կանայք չը պէտք է միանան բուրժուազական ֆէմինիստներին, այլ պիտի ընթանան ձեռք-ձեռքի տուած սոցիալիստական կուսակցութիւնների հետ։

*

Կոնգրէսը մօտենում է իր վախճանին։ Մի շարք բանաձևեր ևս դրւում են քուէարկութեան և ընդունւում են միաձայն։ Միջազգային սոցիալիստական կոնգրէսը իր բուռն համակրութիւնն ու հիացմունքն է յայտնում ռուսաստանցի սոցիալիստներին ու յեղա-

փոխականներին, նրանց հերոսական ու արիւնալի պայքարի համար։ Քէէարկութիւնը կատարւում է ծափահարութիւնների որոտով, դահլիճը ոտքի է կանգնում. ռուսաստանցի պատգամաւորները նոյնպէս յոտնկայս, գլխի շարժումներով յայտնում են իրենց շնորհակալութիւնը։

Մի բէզոլիւցիա ևս ընդդէմ Ֆրանսիական արշաւանքի դէպի Մարոկկո, մի ուրիշը՝ ռումանական կառավարութեան դէմ, հակահրէական հալածանքի առթիւ, մի երրորդը՝ յօգուտ Ամերիկայի հանքագործ բանւորների—և Ինտերնացիոնալը փակում է իր 6-օրեայ նստաշրջանը։ Նորից հնչում է գոռ ելևէջներով սոցիալիստական ռազմերգը, նորից այլացեղ պատգամաւորները համաշխարհային իրենց եղբայրացման հանդէսն են կատարում „պրոլետարական Մարսէլիէզի“ ցնցող որոտի մէջ և ապա ամեն ինչ լռում է, կոնգրէսիստները հրաժեշտի ողջոյն են տալիս իրար և հեռանում դէպի աշխարհի զանազան ծայրեր։

Առաջիկայ միջազգային կոնգրէսը տեղի կունենայ 1910 թուին, կոպենհագում։

—

„Դրօշակի“ խմբագրութիւնը ներկայացրել էր Շտուտգարտի կոնգրէսին տպագրուած հակիրճ զեկուցում Հ. Յ. Դաշնակցութեան 17-ամեայ գործունէութեան մասին, Թիւրքիայում և Անդրկովկասում։ Այդ զեկուցումը տարածուեց հարիւրաւոր օրինակներով կոնգրէսի մէջ։ Նա կը կցւի այն ընդհանուր ժողովածուին, որ շուտով պիտի հրատարակէ Բրիւսէլի միջազգային սոց. Բիւրոն։ Նրա բովանդակութիւնը համառօտակի կը բերենք առաջիկայ համարում։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՉԱՎՈՒՇ

(ՍԱՐՀԱՏ)

1871—1907

I

1885-ին առաւօտ մը Սասնոյ սարէն լեռնցի մը կ'իջնէր դէպի վար։ Քոմն ի վեր կը քալէր պատանի մը՝ պայծառ, լուսաւոր ճակատով և կրակոտ, համարձակ աչքերով։ Հայր ու տղայ էին։ Կ'երթային դէպի Առաքելոց վանքը։

—Աստուած օգնակա՜ն, Հայր սուրբ։

—Հոգւոյդ պահապա՜ն, զաւա՛կս։

—Մեռնիմ քեզիք, Հայր սուրբ, էտա զիմ լաճ բերեր եմ վանք կարդալ սովրելու, միս քեզի՛ք, կաշին ու ոսկոր ինծի՛ք։

Այդ միսն ու ոսկորը Գէորգինն էին, որուն Հայրը գրին ու գրքին երկիւղած պաշտամունքովը՝ կը բերէր իր զաւակը ահա Առաքելոց վանքի դպրութեան տաճարին իբրև մատաղ։

Տասնեվչորս տարեկան էր այն ատեն Չավուշը, հազիւ խելահաս ու գիտակից այդ ճակատագրական նիւրումին՝ որ կը բանար կեանքի առաջին խորհրդաւոր կամարը իր առջև և որմէ ետք դեռ պիտի բացւէին նոր ու անծանօթ կամարներ՝ լի մրրկայոյզ անակնկալներով ու գահավէժներով, լի պայքարով, փոթորիկով ու ալեկոծութեամբ։

Դժուար թէ չորս հսկայ պարիսպներով շրջապատուած այդ դաւառը մենաստանը կարողանար պահել իր մէջ Բանաց դաւառի ըմբոստ զաւակը, եթէ այդ մենաստանը՝ Առաքելոց վանքը չ'ըլլար միայն, ուր լեռնական մատաղ բայց խրոխտ հոգիները՝ հեռո՛ւ միստիքական թելադրութիւններէ ու կրօնական աշխարհատեաց, ջլատիչ տպաւորութիւններէ, կուգան մանիլ քիչ մը լոյսով ու ձգտիլ դարձեալ իրենց սարերու կոյս ազատութիւնը։

Չորս տարի մնաց Գէորգը վանքին մէջ և այդ դպրոցական չորս տարիները եղան նոյնքան արկածալից ու անհանդարտ, որքան յետագայ բոլոր իր կեանքի տարիները. կո՛ւ քիւրդ լաճերու հետ՝ որ կը համարձակէին վանքի դառնուկները գողնալ, կո՛ւ քիւրդ հովիներու հետ՝ որ կը բերէին իրենց նախիրը արծելու վանական արօտներու վրայ։

Այս միջոցներուն էր ահա որ վանքի շուրջը հանդիպեցաւ Արաբոյին ու ընկերներուն և առաջին անգամ լսեց „ընկերութիւն“ խորհրդաւոր բառը։ Ոգևորումի, արկածի և խռովքի ծարաւի իր հոգւոյն խորը արթնցան առաջին դիւցազնական բնազդները այս հանդիպումէն՝ որ ներշնչեց իրեն անձնավստահութիւն ու յանդգնութիւն։ Եւ սրտովին՝ կապւեցաւ Արաբոյին, Լևոնին ու ընկերներուն, որոնց գաղտնաբար կերակուր կը տանէր վանքէն։

Անծանօթ գրգիռ մը նեղել կը սկսէր իր պատանիի զգացումները և անհրապոյր, հետզհետէ անտանելի կը դարձնէր իրեն, վանքն ալ, դպրատունն ալ, դասագիրքն ալ։

Վրայ հասաւ Կիւլիզարի ողբերգական դէպքը և Մուսա պէկի խժդժութիւնները որոնք ցնցեցին Տարօնը։

Դժոխք դարձաւ վանքը, Գէորգ կապեց տրեխները, վերցուց ճոկանը ու առաւօտ մը նորէն իր լեռնաշխարհը բարձրացաւ։

Մքտինքն է հիմա, իր պապենական օրհնեալ օճախը։

Մքտինքը, Գէորգի այդ ծննդավայրը, Բասանց գաւառի այն գիւղն է՝ Պէրմի հետ, որ սնուցած է Սասնոյ յայտնի կարիճները և խանձարարուրը օրօրած է այն քաջարի ասպետներուն, որոնք իրենց քաջագործութեան համբաւովը լեցուցած էին երկիրը։

Վարպետ և անվեհեր որսորդներ են հոն ամէնքն ալ, այդ վայրի ու խրոխտ աշխարհին մէջ՝ որ թօթափած իր վրայէն բոյս ու բուսականութիւն՝ ժայռ ու ապառաժ է կարած։ Ոչ մէկ քնքուշութիւն, ո՛չ մէկ փափկութիւն, բրնութեան ո՛չ մէկ թեթև նազանքը, սեպ կատարներուն վրայէն՝ որ կը փայլին արևուն դէմ՝ կանցնին քարայծնեը հովի պէս արագ և օդին մէջ կը լսւի արծիւին հզօր թևերուն թափահարումը. յարաժամ, տևականօրէն տարերային պայքարը կը լարէ կենդանին կենդանիին՝ քիւրդը հայուն և հզօրը տկարին դէմ, վա՛յ տկարին, վա՛յ անզօրին։

Գէորգին հայրը համբաւաւոր որսորդ էր, որուն աչքերը դժբախտութիւն ունեցան տարիներ յետոյ լոյսէ զրկւելու։

Գէորգին կը մնար ուրեմն՝ ապաննելու համար լեռան ձանձրոյթը, հօրը հրացանը շալկել և թափառիլ մայառներուն ետև, ապառաժներուն վրայ և որսալ ինչ որ հանդիպէր։ Առտուն կանուխ դուրս գալով տունէն՝ իրիկունը մութին հետ տուն կը մտնէր։

Վանքէն, վարի աշխարհէն, Արաբոյէն ու ընկերներէն արդէն բաժանուած էր աւելի ըմբոստ, աւելի խիզախ „Ընկերութիւն“ բառը մոգական ազդեցութիւն ըրած էր անոր մտքին վրայ, որ կը մղէր զինքը իր շուրջը խմբելու երիտասարդ ընկերներ և պատրաստելու զանոնք։

Եւ մանուկ „ընկերութիւնը“ պատանի այդ ըմբոստներուն՝ յափշտակուած Արաբոյի, Լևոնի քաջագործութիւններով՝ անդադար կռւի մէջ էր քիւրդ լաճերու հետ, առաջնորդ ունենալով Գէորգը։

Բայց հազիւ տարի մը կը տևէ այս ազատ, ինքնիշխան կեանքը՝ երբ տարօրինակ միջադէպ մը եկաւ յայտնելու թէ այս պատանիին մէջ կազմուած էր արդէն պինդ և անկախ նկարագիր մը, որ կը շեշտեր անոր ըմբոստ անհատականութիւնը։

Իրիկուն մը տուն վերադարձին, հայրը բարկացաւ իրեն և արգիլեց որ իր հրացանը չի գործածէ այլևս։

—Վա՜, այդպէ՞ս, հա՛, ըսաւ Գէորգ, թող այս օճախը ինծի համար ըլլայ մինչև որ ես ինծի համար հրացան մը չը գտնեմ։

Գեղեցիկ հրացան մը ամբողջ հարստութիւն մը, թա-

գաւորութիւն մը կարժէ Սասնոյ լեռներուն վրայ։ Ո՞չ դանել։

Գէորգ վար իջաւ սարէն, Ջորեպանի մը հետ գնաց շիտակ Հալէպ՝ դրամ վաստակելու որպէս զի հրացան մը գնէ։ Հազիւ վեց ամիսի չափ մնաց հոն, որովհետև իր ազգականները իր հաւնած հրացանը գնեցին և ուրիշ իրեն ու վերադարձուցին հայրենիք։

Երբ տուն դարձաւ ու դռնէն ներս մտաւ, իր „պռահիմփաշա“ չախմախլի հրացանը հօրը առջև դրաւ ու ըսաւ՝

—Վատ դրացին՝ մարդս գործիքի տէր կ'ընէ...

Ճիշտ է, ոչ միայն գ ո ր ծ ի ք ի տէր եղաւ, այլ և գրտաւ իր բացարձակ անկախութիւնը։

Այս պահուն արդէն 90 թուականն էր, որ կը բանար հայկական յեղափոխութեան արիւնոտ շրջանը և դեռ յեղափոխական առաջին քարոզիչները Սասնոյ լանջերուն վրայ չ'երևցած՝ արդէն Գէորգը, ինքնաբերաբար, իրերու բռնութեամբը, շրջապատող պայմաններուն դէմ ըմբոստ՝ կը հրաւիրեր գիւղացի երիտասարդութիւնը „ո՛չ խարճ, ո՛չ ալ խարաճ տալ կառավարութեան“։

Ու երբ Տամատեան Սասնոյ վրայ ոտք կոխեց՝ Գէորգը եղաւ անոր առաջին ընկերը, անոր վստահելի ու ամէնէն անխոնջ գործակիցը, ինչպէս նաև տեղին պայմաններուն աւելի ծանօթ ու իրազեկ ուղեցոյցը։

Հազիւ թէ տարուան մը կազմակերպական աշխատութիւնը վատնուած էր, և ահա վրայ հասաւ Տալորիկի 92 թուականի մեծ կռիւը։ Քիւրդ աշիրէթները ահագին ուժով ինկան Տալորիկի վրայ։

Այս կռուին մէջ—որուն մասնակից էր նաև Հրայրը—Գէորգը հակառակ իր փոքր տարիքին ու փոքր հասակին, ցոյց տուաւ այնպիսի քաջութիւն, այնպիսի արտակարգ յանդգնութիւն, որ Տալորիկի ամէնէն փորձ ու տարէց ռազմագէտներուն հիացումը և զարմանքը գրաւեց։ Կռիւը բուռն ու օրհասական էր, որովհետև երկրորդ օրը թշնամին օգնութիւն ստացած և ուժովցած գրոհ կուտար և տալորիկցիները կը պատրաստուէին նահանջել դէպի Ֆռֆռ քարը։ Խուճապ մը ոչ միայն պ է ն ա մ ո ւ ս պիտի հաներ ամբողջ Տալորիկը, այլ նաև աղետալի ջարդի մը պիտի մատներ 6—700 ընտանիք։ Գէորգը Փրխվայ Տէր-Գաբրիէլ քահանային հետ կռնակ կռնակի հերոսաբար շարունակեցին դիմադրութիւնը և խլեցին յաղթութեան փառքը։

Սասունը փրկուած էր և յաղթական։

Առաջին դափնին էր որ Գէորգը կը շահէր 21 տարեկան հասակին մէջ և իր անունը կը դարձնէր ժողովրդական ու սիրելի։

Անցաւ տարի մը։ Կառավարութիւնը կը հետապնդէր Տամատեանը։

93-ին, ինքը Տալորիկ կը գտնուէր, երբ գոյժը հասաւ թէ Սէմալի մէջ ձերբակալուած է Տամատեանը։ Անմիջապէս հաւաքելով տալորիկցիները՝ թռաւ դէպի Սէմալ հաւարիսակայն ուշ էր արդէն, Տամատեանը իջեցուցած էին Մուշ։ Այդ օրէն՝ աւելի խոր ատելութեամբ ու վրէժխնդրութեամբ լեցուած դէպի բռնակալութիւնը, ուխտեց վար չը դնել զէնքը և նուիրուիլ յեղափոխութեան, մինչև իր վերջին շունչը։

Հաւատարիմ մնաց իր ուխտին։

Ի զ՞ուր կառավարութիւնը ձերբակալելով Տամատեանը՝ կը յուսար թէ ազատութեան ատաղը Սասնոյ բարձունքներուն վրայ թեքուած և խաւարած ըլլար։ Գէորգը հոն էր իր ընկերներով վառ պահելու նուիրական հուրը։

Երկար չը տևեց. Մուրատ էֆէնտին—ինչպէս կ'անուանեն սասունցիները—երկրորդ անգամ ըլլալով վերադարձաւ Կովկասէն, ուր գացած էր զէնք ու ռազմամթերք ճարելու։ Գէորգ՝ իր ընկերներուն՝ Կարապետի, Քոլոս Օհանէսի, Ադամի ու միւսներուն հետ միացան Մուրատ էֆէնտիին։

Սկսան դարձեալ դանդաղ բայց անվհատ աշխատութիւնը՝ կազմակերպելու և համախմբելու մէկ գազափարի շուրջ լեռնական այս արի ժողովուրդը, որ սակայն բաժա՞ն բաժա՞ն գիւղերու մէջ, յաճախ մինչև եսականութիւն հասնող ծայրայեղ անհատապաշտութեամբ մը և ցեղային ցաւալի հակակրութիւններով տարուած՝ կը դժուարացնէր հաւաքական ճիգը ու ընդհանուր գործակցութիւնը հասարակաց թշնամիին դէմ։

Դժբախտաբար այդ կիսանկախ, բռնակալութեան անմիջական ապականիչ դրացնութենէն հեռու ինկած սարերուն վրայ ալ վատութիւնը գոյութիւն ունէր։ Ալի-Զունանի ուէսը՝ որ մատնած էր Աբաբօն ու իր ընկերները, կը հետապնդէր այս անգամ Մուրատ էֆէնտին ու Գէորգը, մինչև որ Գէորգի արդարակորով բազուկը վերջ տուաւ այդ սոդոմնի կեանքին։

Վրայ հասան 94 թուականի մեծ օրերը։

Անթիւ, անհամար էշերը պաշարեց Կէլիէկուզանն ու Սէմալը և սկսաւ սարսափելի՜, անհաւասա՜ր կռիւը՝ որ տևեց տասը օր։ Գէորգի ամբողջ մարտական խումբը կը բաղկանար 8 կտրիճներէ, բայց իր հետ էին անոնման տալորիկցին, սէմալցին, շէնիքցին ու Կէլիէկուզանցին. իսկ թշնամին անհամար էր։

Միայն սասունցին կարող էր ճակատ տալ այս տեսակ ահաւոր յարձակման մը և միայն Գէորգին անվեհեր յանդգնութիւնը կարող էր դէմ դնել և արհամարել թշնամիին զօրութիւնը։

—Ցէլեխրն, պուայէ ամէն, տէլեխրն, զա՛րկ, եղբայր, զա՛րկ, կը պոռար, իմտատը շա՛ւտ կուգայ կը հասնի Ռուսստանէն. մի կարծիր որ այս 5 սիւրմալիով ու 2 խաբախլիով պիտի մնանք. եթէ մնանք ալ՝ յաղթութիւնը մերն է, Մուրատ էֆէնտին մեզի համար փամփուշտ կը լեցնէ. զարկէ՛ք, զարկէ՛ք անխնայ...

Բայց Ռուսստանը շատ հեռու էր և կռիւը օրհասական։ Կառավարական զօրքը՝ որ սկիզբները հանդիսատես կը մնար լոկ, յուսալով որ քիւրդ էշրէթները կարող պիտի ըլլային շուտով յաղթանակը տանիլ, խաբուած իր հաշիւին մէջ, նախ քիւրդ տարազով ծպտած, յետոյ յայտնապէս՝ միացան բարբարոս խուժանին ու յարձակումը սաստկացաւ։

Քաջարի սասունցին կամաց-կամաց սկսաւ նահանջել դէպի Տալորիկ՝ առաջնորդութեամբ Գէորգի ու ընկերներուն։ Փամփուշտները սպառուած էին, ռազմական դիրքերը անցած թշնամիին ձեռքը, Սասնոյ բոլոր կիրճերն ու ճամբաները բռնուած՝ զօրքերէն ու քիւրդերէն։ Դիմադրութիւնը անկարելի էր այլևս շարունակել։

Գէորգը, Մուրատ էֆէնտին ու շարք մը տալորիկցիներ բռնադատուեցան ապաստանիլ Տալորիկի Հարթ թաղին տակ գտնուող քարայրը՝ որ 10 բոպէով հեռի է Զինկոյ քաղէն։ Թշնամին սակայն՝ մատնութեան մը շնորհիւ, իմանալով թագստոցին տեղը՝ պաշարեց քարայրը, զօրքը վերէն գալով ու Փափուռէ Կէնճօն ալ իր էշերով դեռին միւս կողմէն։ Ինքնապաշտպանութեան ոչ մէկ միջոց։ Սակայն Գէորգը, Սասունի հպարտ զաւակ, չուզելով գլուխ ծռել, հրացանը թշնամիին ուղղեց։

—Վա՛ր դիր հրացանդ, ընկեր, խնդրեց Մուրատ էֆէնտին հանդարտ, մենք մեր 40 փամփուշտով, կուժ մը ջրովն ու սակաւ մը խաղողովը չենք կրնար երկար դիմանալ, պէտք է համակերպիլ...։

Մուրատը, Գէորգը ու ընկերները ձերբակալելով տարուեցան Սէմալի եկեղեցին, ուր շարշարանքի ու տանջանքի առաջին քստմնելի փորձերուն մկրտութիւնը կրեցին. մինչ դուրսը, կապաններուն, կիրճերուն և Տալորիկի գեղերուն մէջ կը լայնանար, կ'ընդհանրանար անասելի, ահաւո՜ր եղերերգութիւնը Զէքիի վայրագ հրամանատարութեամբ։

Մուշէն Պիթլիս և Պիթլիսէն դարձեալ Մուշի բանտը երբ եղեռնագատ ատեանը վճռեց արդէն դատապարտութիւնը։

Տասը հինգ տարուան բերդարգելութիւն։

Գէորգին թուաց թէ այդ կեանքը հազար անգամ անգութ ու անտանելի էր գերեզմանէն, կը սեսներ արդէն որ բանտին մէջ իր երիտասարդութիւնը և կորովը, և ինքնավստահութիւնը կորցնելով պիտի մնար միայն ստուեր մը, նախկին ռազմիկ Գէորգէն։

Անկարելի էր համակերպիլ այս վախճանին։

Եւ սասունցին սկսաւ կրծել իր գառագեղին երկաթները։ Ազատ լեռները կը տենչար։

Պէտք էր քանդել „Սվարի ղըշլասին“, Մուշի այդ անիծեալ բանտին վանդակները՝ թռչելու համար դարձեալ դէպի Սասնոյ սարերը, որոնց ազատ սարսուռը կը բերեր իր հետ քամին։

Մուրատը երրորդ յարկն էր, ու Գէորգը երկրորդ յարկը և խտիւ արգելած էր յարաբերութիւն ունենալ Մուրի ու անարև նկուղին մէջ առարկայ մշտական նախատինքի, զրկանքի, բանտային ստորերկրեայ տանջանքներու՝ մօտ երեք տարի համբերեց։

Առաջին օրէն երբ բանտի չորս պատերուն մէջ փակուեցաւ, յանդուգն վանդակները չափող և անոնցմէ օգտուելու վարժ իր աչքերը սրատեսութիւնն ունեցան արդէն նշմարելու այն հնարաւոր կէտը՝ որ կրնար անցք տալ իր փախուստին։

Իրեն լոյս տուող պատուհանը՝ պատշգամաձև դուրս ինկած էր պատին երեսէն մէկ քանի թիզ և վանդակի մը պէս կը կախուէր բարձրութեան վրայ. Գէորգը հաշուեց որ եթէ կարելի ըլլար պատուհանը ծակել և յաջողութեամբ գործը գլուխ հանել, այն ատեն կը մնար միայն վար կախուիլ և անգամ մը ստորերը դետին դնել... մնացածը ազատութիւնն էր։

Սկսաւ անշշուկ, և մրջիւնի աշխատութիւնը դիշերուան մութին ու լռութեան մէջ և ամէն առաւօտ հոդը գրպանովը կը կրեր դէպի... ու կանհետացնէր. բանտային խուզարկուներէն թաղուն պահելու համար Գէորգը գործադրեց ապշեցուցիչ հնարամտութիւն և խորագիտութիւն։

Աշխատութիւնը իր վախճանին կը մօտենար, բայց ուրիշ նոյնքան յամառ, նոյնքան հզօր մտահոգութիւն մը ունէր։ Ինչպէ՞ս փախչիլ բանտէն՝ առանց Մուրատ էֆէնտիին, որուն համար մասնաւոր յարգանք կը տածէր։ Այս իսկ պատճառով քանի մը անգամ ներկայացած առիթներէն կամովին չուզեց օգտուիլ, անոր համար որ Մուրատ էֆէնտին իր հետը պիտի չ'ըլլար։ Ուստի ծակեց առաստաղը, նորօրինակ բայց ապշեցուցիչ միջոցով մը հեռախօսի հաղորդակցութիւն մը հաստատեց Մուրատի հետ. մանկութենէն սորված էր թէ լուցկիի մը երկու տուփերու միջև թել կապելով՝ կարելի էր խօսակցութիւն կատարել մօտաւոր հեռաւորութեան մը վրայէն։ Այդպէս ալ ըրաւ։

Սակայն Մուրատը կը յամառէր մերժել ամէն առաջարկ։ Գէորգը՝ յուսահատութիւնը հոգոյն մէջ, համոզուեցաւ որ պնդելն ու աղերսելն անօգուտ էր վերջապէս։

97-ի ապրիլի 7-ն էր, ամէն ինչ պատրաստ՝ յանդուգն և դերագոյն փորձը հարկաւոր էր։ Այդ իրիկուն բարեբախտաբար սարսափելի փոթորկալից և ձիւնախառն անձրևի պատճառով, թանձր մութ մը տիրեց։ Գէորգը կապեց մէջքին պարանը՝ որ ինքը հիւսած էր իր ձեռքով, (մարդ չը գիտեր ի՞նչպէս և ուրկէ՞ ձեռք ձգած էր այծի մազը), ու օձի պէս սողոց բարձրութենէն վար, ընկերները վարը կը սպասէին արդէն։ Բանտին պահակը՝ մութին մէջ մարդկային շշուրթներ զանազանելով հարցուց սպառնաձայն։

—Ո՞վ էք դուք։

—Ճամբորդներ։

Ու միամիտ պահակը՝ քաշուեցաւ իր անկիւնը, ինքզինք պատպարելով երկնքէն իջնող հեղեղէն։

Համաձայն նախապէս ծրագրուած որոշման՝ փախստականները բաժնուած երկու տարբեր ճամբաներու Տ... գիւղին քարայրին մէջ վերատին միացան իրարու։ Անկէ անդին Սասունն էր։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

ՄՈՒՇԻ ՅԱՐՁԱԿՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

ՄՈՒՇ, 25 յունիս

Սուլուխի արիւնալի դէպքէն յետոյ՝ կացութիւնը ծանրացաւ։ Կառավարութիւնը դրդում էր քիւրդերին, թիւրքերին և նոյնիսկ զօրքերին կոտորած առաջ բերել։ Երկիւղալի շշուկներէն դրդուած հայերը տներն էին քաշուել։ Ութ օր յետոյ, կառավարութեան ճնշումներուն վրայ՝ հայերը հարկադրուեցան խանութները բանալ, բայց սոսկումը մեծ էր, որովհետև թիւրքերը խանութները զէնք էին լցրել և զինուած նստել։

Յունիսի 20-ին, հինգշաբթի զօրքեր և թիւրքեր համաձայնում են ժամը 4-ին, շուկայում ընդհանուր ջարդ սկսիլ։ Առաւօտեան արտակարգ շարժումներէն հայերը բռկում են կասկածիլ և ոմանք քաշւում են և ահա ժամը 2-ին՝ 4—500 զինուորներ առանց հրացանների՝ ատրճանակներով և դաշոյններով զինուած, յանկարծ լցւում են շուկան և դիմում դէպի մզկիթ։ Թիւրք սահակներէն ոմանք առանց սպասելու ժամը 4-ին, զօրքերու շարժումը նշանաբան առնելով, ընկնում են հայերի վրայ, որոնք սակայն փախուստ են տալիս։ Բայց հէնց այդ խուճապի միջոցին, թիւրքերը յաջողում են վիրաւորել փախչող հայերին։ Նոյն հայոց թաղերում այդ միջոցին կիները և երախաները մի զարհուրելի լայ սկսեցին, գոչելով թէ շուկայում ջարդ կայ. անդ!ն, անպատրաստ, յանկարծակիի եկած հայերի առաղաղակը, ամբոխի ահաբեկ կոչերը դղրդեցին բոլոր քաղաքը։ Մոլեգնած՝ հայ կիներէն շատերը դէպի շուկան, դէպի սուրն ու կրակը էին խուժում իրենց զոհաբերութեամբ փրկելու իրենց սիրելիները։ Տեսարանը յուզիչ էր։

Նոյն պահուն շատերը արդէն վիրաւոր ընկել էին և շալակով արիւնաթաթախ նրանց փոխադրում էին։ Ահա անունները՝ Զորոյ թաղէն՝ Արփիար Աբրոյեան 30 ամեայ՝ գնդակահար, Ասիկ Ներսէսեան, 16 ամեայ՝ դաշունահար, Գնօ Տօնոյեան, 50 ամեայ՝ դաշունահար, Աբեթ Կաքէեան, 20 ամեայ՝ դաշունահար, Խորէն Տ. Սահակեան 18 ամեայ՝ դաշունահար, Արշակ Պողոսեան, 26 ամեայ՝ դաշունահար, Մարինէ Խուշակեամէեան, 25 ամեայ՝ դաշունահար, Սարգիս Յովակիմեան 36 ամեայ՝ գնդակահար, Մոկցի Մկրտիչ 24 ամեայ՝ դաշունահար։

Այս արիւնահեղ իրարանցումի ժամանակ, զօրքերի հրամանատարը պարտիզում անտարբեր հանդիսատես էր։ Բանը բանից անցնելէ յետոյ՝ թիւրքեր և զօրքեր իրար են յանդիմանում թէ ինչու ժամը 4-ին չը սպասեցին և ջարդը վիժեց, ուր հազարներ զոհ պիտի գնային։ Սարսափահար ժողովուրդը էլի քաշուեցաւ տները և կատարեալ պաշարած է զինեալ թիւրքերից՝ այնպէս որ ոչ ոք չի համարձակում դուրս գալ։ Դպրոցներ, եկեղեցիներ, շուկան ամբողջ փակ են։ Սովը և սուրը միացել են ժողովուրդը ջնջելու։

Թիւրքերը ահագին պատրաստութիւն են տեսնում նորից հայոց թաղերի վրայ յարձակելու համար, մզկիթներում զէնք են դիզում, հայերի երկիւղը անկարագրելի է։ Կառավարութիւնը համոզում է հայերին տներից դուրս գալ, բայց նրանք չեն վստահանում։ Վերին աստիճանի մեծ անմտութիւն կը լինի հաւատ ընծայել այդ սոսկ կառավարութեան, որ այս բոլոր աղէտի միակ պատճառն է։

Հայ գիւղերը—Գոմս, Սանիստ, Յուշդամ, Արտիրթ. չէրքէզներ են լեցնում, հաղորդակցութիւն չը կայ։ Դաշտում զօրքեր և ոստիկաններ անդադար խուզարկում են։ Մեծագոյն յանձանք է՝ այդ դժոխային պայմաններում՝ ինքնապաշտպանութեան փորձ անելը։

***

Կառավարութեան ճնշումների հետևանքով յունիս 14-ին շուկան նորէն բացուեց, և սակայն դեռ քանի ժամ չանցած լուր հասաւ որ Պէլպաշի քիւրդեր իրենց ցեղապետին Սլօյի և Պրքօյի առաջնորդութեամբ նոյն օրը ժամը 8-ին յարձակել են 30 տնւոր Պաղլու հայաբնակ գիւղին վրայ, ուր ապաստանել էին Հերկերտ գիւղացի ութը հալածական հայ երիտասարդներ. քրդեր հրդեհում են նրանց կեցած տունը. խեղճերը հազիւ մի տկար ընդդիմութիւնից յետոյ շնչահեղձ ու գնդակահար ետևէետև սպանւում ու յօշոտւում են։

Նրանց անուններն են՝ Համբար Մխոյեան, Ստեփան Մաթոսեան, Յարութ Բարսեղեան, Միսակ Մկրտչեան, Ռատօ Մլքոյեան, Էրօ Խուտոյեան, Սերոբ Մրտէեան, Գզիր Խլօ։ Պաղլու գիւղը բոլորովին կողոպտուում է իր գոյքերից ու կենդանիներից. Ճամբաների բոլոր տներ այրուում են, տղամարդիկ հալածական լեռներն են ընկել, կիներ երեխայք ընկել են ուրիշ գիւղերի փողոցները։ Յաջորդ օրը՝ նոյն քիւրդեր բազմութեամբ յարձակել են Պաղլուի հարևան Մեղդի գիւղի վրայ, սպաննել են Մկրտիչ Ուրուսեանը, ծանրապէս վիրաւորել են Հասիկ Մանուկեան և Աւագ Սիրոյեան անասուններու մի մասը թալանել, ժողովուրդը ցրուել է։

ԳԱՐԻԲԱԼԴԻ

(ծննդեան 100-ամեակի առիթով)

II

Գարիբալդեանները դեռ նաւին մէջ լուր առին՝ թէ թշնամին երկրէն դուրս վռնդուած է, ուրախութենէ խելայեղ կուգէին շուտ թռչիլ սուրբ դաւտի յաղթանակին իրենք ալ մասնակից ըլլալու համար։ Երբ ճենովա ելան Մաձինեանները, իրը հանրապետականներ, ջանային համոզել Գարիբալդին որ չը զինուորագրի Պիէմոնդի բանակին մէջ։ Գարիբալդի խուլ մնաց այդ հրաւէրին, ինք կը կարծէր որ երբ խնդիրը ազգային անկախութիւնը ապահովելու մասին է, մարդ իրաւունք չունէր իր օգնութիւնը սակարկելու իր երկրի կառավարութեան, թէ հայրենիքի գաղափարը վեր էր ամէն բանէ։ Պիէմոնդի թագաւորը այն միակ իշխանն էր հայրենասէր որ կր կրուէր Իտալիոյ ազատագրութեան համար. Գարիբալդի պիտի երթար անոր հրամանին տակ մտնել։

Արդէն կռիւը պայթած էր, հիւսիսային Իտալիան ալեկոծուած՝ „մահ շունին, մահ դերմանացիին“ կագաղակէր։ Գարիբալդի իր կամաւորներուն հետ աւստրիացիներուն դէմ յաջողապէս կիրառեց հրոսակային սիստէմը, որուն փարձառութիւնը բերած էր հարաւային Ամերիկայէն, և քանի քանի անգամ գետինը խածցուց աւստրիացիներուն, որոնց կատարած անգթութիւնները Իտալիոյ մէջ՝ քարերն իսկ կը դողացնէին։ Գարիբալդի տեղի կուտար միայն թշնամիին ահեղ ուժին առջև։

Գարիբալդի աննման հրոսակապետ մըն էր, թէև ոչ լաւ կազմակերպիչ. ոչ մէկ մարդ անոր չափ չէ կրցած այնքան վառ հայրենասիրութիւն ներշնչել իր կամաւորներուն և անոնց բարոյականը բարձր պահել, և ոչ ոք անոր չափ ազդեցութիւն չէ ունեցած ժողովրդի հոգիին վրայ։ Կռիւի դաշտին վրայ կը գտնէր իր ռազմական ծրագրումը. զընտակների սուլոցները անոր հանճարը կարթնցնէին. որահայեաց, որոշումներու մէջ արագ, եզական էր թշնամին յանկարծակիի բերելու մէջ։

Այդ ատեն Անիդան, որ հետևած էր իր ամուսնու յաղթութեան և պարտութեան փառքին, հիւանդապահ եղաւ։ Գարիբալդիի զինուորները ուրախ կը մեռնէին երբ անձնուէր և քաջասիրտ Անիդան իրենց ոտարի վերև կը տեսնէին։

Երբ Հռոմ մտնելէն յետոյ՝ աւստրիական բանակին առջևէն խոյս կուտար Գարիբալդի սա կոչը ուղղեց մարտիկներուն, „Զինուորներ, Հռոմէն դուրս կելլեմ։ Անոնք որ կուզեն շարունակել կռիւը հետս գան։ Ես անոնց ոչ պատիւ, ոչ ռոճիկ կրնամ տալ, այն անօթութիւն, ծարաւ, յոգնապատ վազք և մահ։ Հայրենիքը սիրողը ետևէս թող գայ“։—Հազարաւորներ անոր ետևէն վազեցին։ Անիդան հակառակ իր յղի վիճակին և իր ամուսնուն թախանձանքին մազերը կտրեց և տղամարդու հագուստ հագած ընկերացաւ ազատութեան լեգէոնին։

Աւստրիական զօրքերը, լրտեսները անդադար կը հալածէին Գարիբալդին. աննման հերոսուհին, յղի և յոգնապառ մեռաւ Ռավէննայի դաշտերուն մէջ՝ իր ամուսնուն գրկին մէջ։ Անիդա իր ամուսնուն արգաւանդ և փոթորկալից տարիներուն, խառնեց սիրոյ և մահուան անոյշ բոյրը։ Գարիբալդի իր հետը պտտցուց այդ հիանալի կնոջ մահուան խոր կսկիծը։

Իտալական շարժումը խորտակուեցաւ, Նովարի ազէտաբեր կռուին մէջ, շնորհիւ իր իշխաններու ճղճիմ և անափառ անհամաձայնութիւններուն, այնպէս որ Աւստրիոյ լուծը շուտով նորէն հեծաւ անոր վզին։

Այդ ազէտը տեսակ մը լքում և վհատում առաջ բերաւ Իտալիոյ հայրենասէրներուն մէջ և պահ մը կարծուեցաւ թէ Իտալիոյ ազատութեան սուրը իսպառ խորտակուած էր։ Անհամաձայնութեան դառն փորձը և կոպիտ իրականութիւնը մտածել տուին թէ իշխաններուն և թէ խորհողներուն։ Մաձինին դէպքերու և իրերու ձախող ազդեցութեան տակ, իր վերջին յայտարարութեան մէջ, ժամանակաւորապէս հրաժարելով հանրապետական երազէն, կը թելադրէր քաղաքական հարցը առաջ դնել հասարակական հարցէն, առաջինը պիտի օգնէր երկրորդին և խորհուրդ կուտար նոյնիսկ համախմբուիլ Սաւոյայի փոքրիկ թագաւորութեան շուրջը իբր հաստատուն կորիզը ազգային միութեան։

Գարիբալդի աւելի բանիմաց քան խորունկ, իր յոյսը դրած էր սուրին վրայ. անոր համար Իտալիոյ ազատութիւնը դաշոյնի հարուած մըն էր. „մենք աւելի զինուորի պէտք ունինք, կըսէր, քան հռետորներու“։ Թունդ հանրապետական մը, բայց իրերու և կեանքի հզօր իրապաշտութիւնը ունէր. գիտէր հասկնալ և օգտուիլ իրական պահանջներէն, եթէ իր աչքերը միշտ աստղերուն յառած մնացին, բայց իր քայլերը դաժան իրականութեան մէջէն ուղիղ կը քալէին։ Ամէն բանէ առաջ և ամէն դնով ու զիջումով, Իտալիան ազատ ըլլալու էր։

Երբ Վիկտոր Էմմանուէլ գահ բարձրացաւ, ազատական սահմանադրութիւնով մը օժտեց իր փոքրիկ թագաւորութիւնը, ատով դերիացած Իտալիան աւելի փարեցաւ Վիկտոր Էմմանուէլի, որուն մէջ կը տեսնէին Իտալիոյ ազատութեան յենակէտը։

Գարիբալդի իր հայրենիքի ազատութեան կռուի առաջին շրջանի անյաջողութենէն յետոյ, վերադարձաւ նորէն Ամերիկա, ուր առևտրով զբաղուեցաւ. ճամբորդեց զանազան տեղեր և իվերջոյ վերադարձաւ նորէն Իտալիա և առանձնացաւ Քափրերա փոքրիկ արևոտ կղզին, ուրկէ արծուի նայուածքով կը տեսնէր արդէն Իտալիոյ միութեան արշալոյսը։

Այդ ժամանակ կազմուեցաւ „Ազգային Միութիւնը“, որու նշանաբանն էր „Անկախութիւն և Միութիւն“, „Իտալիա և Վիկտոր Էմմանուէլ“։ Գարիբալդի փոխ-նախագահ ընտրուեցաւ այդ ընկերութեան։

Իտալիոյ պատմութեան այդ եռուն կէտին, Քավուր կը յայտնուի։ Ճկուն, խելացի, եռանդուն և անխոնջ կամքի տէր մարդ՝ խանդավառօրէն կը սիրէր իր հայրենիքը և բոլոր իտէալով կը ձգտէր Իտալիոյ Միութեան։ Իտալիան շրջապատեց անոր հեռատես վարչութիւնը որուն մէջ, ազգային հանճարի խտացումը կը տեսնէր։ Քավուրի հանճարը կը կայանար անոր մէջ որ կրցաւ ընտրել առիթը և ըստ այնմ գործել կամ ժամանակ շահիլ։

1858-ի վերջերը Քավուր նկատեց որ Իտալիոյ խառնակ և անկերպարան դրութեան մէջ, գրեթէ անկարելի էր միամիտ ազատագրիչ, հակառակ այն նշանաբանին թէ *Italia fara da se*—Իտալիան իր փրկութիւնը իր ձեռքով պիտի կատարէ. ուստի ջանաց օտար պետութիւն մը, մանաւորապէս Ֆրանսան շահագրգռել Իտալիոյ ճակատագրով։ Կը հասկնար նաև որ չոր դիւանագիտութիւնը մեծ դեր չէր կրնար խաղալ, եթէ ազատարար և յանդուգն ժէստ մը պատմութեան անիւը շարժման մէջ չդնէր։ Ճարպիկ դիւանագէտին գաղտնի խորհրդով Գարիբալդի հագաւ „կարմիր շապիկը“, իսկ „Ազգային Միութեան „քարտուղարին կըսէր, „կրցածնիդ ըրէք, ես աշխարհի առջև ձեզ կուրանամ ինչպէս Պետրոս ուրացաւ իր տերը։

Միւս կողմէ Քավուր Խրիմի Պատերազմին 15000 զինուոր ղրկեց, և այսպէս Ֆրանսայի և Անգլիոյ համակրութիւնը աւելի շեշտուեցաւ դէպի Իտալիան՝ որ Եւրոպայի թնդանօթներու կրակովը մկրտուած՝ մտաւ եւրոպական նուագին մէջ և Փարիզի 1855-ի վեհաժողովին իր ձայնը ունեցաւ։ Քավուր միջազգային դիւանագիտական հողը կը մշակէր Գարիբալդի սերմացանն էր։

Ամբողջ Իտալիան անկախութեան ու միութեան գաղափարով կը հևար և կը սարսռար։ Գարիբալդի ազատութեան ջահը և սուրը կը պտտցնէր Թերակղզիին վերէն վար։ Իտալիան արտասուած էր, ամենուն աչքերը յառած էին Վիկտոր Էմմանուէլի „արի և ուղղամիտ զինուորը անկախութեան“, որուն համար անսահման համակրութիւն կը տածէր Գարիբալդին։

Նաբոլէոն Գ.-ի համակրութիւնը Իտալիոյ կողմն էր։ 1859-ի պատերազմներուն, Իտալիան Ֆրանսայի օգնութիւնով՝ չարաչար կերպով դուրս վռնդեց աւստրիացիները, իսկ Գարիբալդին անդուլ և յանկարծահաս գրոհներով շուարի և ահի մէջ ձգած էր աւստրիական գունդերը, որոնք կը կարծէին թէ այդ տարօրինակ մարդը „ամէն տեղ է և ոչ մի տեղ է“, կը զարնէր մէկ կէտի վրայ և մէկէն ուրիշ հեռաւոր կէտի մը վրայ կերևար։

Նաբոլէոն, հակառակ իր խոստումին, մասամբ միայն իրականացուց Իտալիոյ երազը։ Քավուր տխրած կըսէր „չեն թողուր որ Իտալիոյ միութիւնը իրագործեմ“։ Աւստրիան սակայն առաջի կամայականութիւնը և ազատութիւնը չունէր այլևս Իտալիոյ մէջ։ Քավուր իր ուշը դարձուց Հարաւային Իտալիա, Սիկիլիա, ուր պուրպօններու անարգ և դժնէ վարչութիւնը, ժողովրդին ատելութիւնը և վրէժխնդրութիւնը գրգռած էր։

Եւրոպան կատարուած իրողութեան առջև դնելու համար գաղտնի դրդեց Գարիբալդին Սիկիլիա արշաւել։ Գարիբալդի իր „հազարեակին“ հետ անակնկալ կերպով մտաւ Սիկիլիա, չարաչար յաղթեց Նաբօլիի թագաւորին զօրքը. իսկ ժողովուրդը ընդունեց մեծ ազատարարը աննկարագրելի ցոյցերով և անողոք կերպով հալածեց իր կեղեքիչները։ Սիկիլիացիներուն կոչ մը ուղղելով Գարիբալդին կ'ըսէր, „ով զէնք չառներ վատ և է դաւաճան, ամէն զէնք լաւ է եթէ կորիճ ձեռք մըն է գործածողը„։ Սիկիլիոյ ժողովուրդը յափշտակուած էր Գարիբալդիի հմայքէն, կը կարծէր որ ան „անխոցելի“ սուրբ մըն է, փողոցներուն մէջ վազելով կը հետևէին անոր, կիները ծունկի կուգային, քահանաները կօրհնէին զայն, գիւղացիք կաշխատէին անոր կօշիկներուն դպիլ, կարծելով որ ամէն ցաւերէ ազատ կըլլան։ Մէկ ծերունի մօտեցաւ, Գարիբալդիին ըսելով, „ժամանակն էր որ գայիք մեզ սփոփելու, որովհետև մեր ծնած օրէն իվեր կուլանք“։

Ֆրանսացի պ. Լօքրուա, որ մասնակից էր Սիկիլիոյ արշաւանքին, սա հետաքրքիր դէպքը կը պատմէ։

„Գարիբալդի գերազանց մարդ էր, ոչ մէկ առիթ չէր փախցներ և ամէն բան կը ծառայեցնէր իր նպատակին հասնելու համար։ Բարձր կղերը իրեն դէմ էր, իսկ հասարակ կղերը անոր հետ էր, ինչ որ մեծ ուժ մըն էր Գարիբալդիի համար։

„Մեր ճամբուն վրայ փոքրիկ գիւղի մը քահանան ժողովրդին գլուխ անցած, երբ տեսաւ Գարիբալդին, ձայնեց։

—Վար իջիր ձիէդ։

Գարիբալդին վար իջաւ։

—Մօտեցիր այժմ, ըսաւ քահանան։ Եւ մեծ խաչելութիւն մը առնելով յարեց։

—Ծռէ գլուխդ։

Գարիբալդին հնազանդեցաւ։

Քահանան այդ ցոյցէն յետոյ, խաչելութիւնը ուսին՝ խառնուեցաւ մեր գունդին ամբողջ հաւատացեալները ետևէն ձգած։ Այդ կորիճ քահանան առիւծի պէս կռուեցաւ Փալերմոյի մէջ և իր խաչելութիւնով մէկէ աւելի թշնամիներ գետին փռեց։

—Թոպամահ կընեմ զանոնք, կը պատասխանէր, որովհետև իմ կրօնքս կարգիլէ արիւն թափելը։

Գարիբալդի, հակառակ անթիւ դժուարութիւններու և թանկագին զոհերու անցաւ Նապոլի, յաղթեց պուրպօնները, վռնդեց զանոնք և յաղթական մուտք գործեց Նապոլի, ուր ժողովուրդը, ցարդ ստրուկ, ովսաննաներ ըրաւ մեծ ազատարարին։ Ամբողջ հարաւը կը թնդար „Միութեան“ աղաղակներով։ Վերին Իտալիան, ուրախութենէն խելայեղ Գարիբալդիի յաղթութեան վրայ, որ սուրի անդուլ հարուածներով Իտալիոյ ազատութիւնը կը դարբնէր, օգնութեան կը թռչէր։ Ամէն կողմէ սպաներ կը վազէին անոր դրօշակին տակ, և բարձր ազնուական կիներ, հայրենասիրական պարտք կը սեպէին դռնէդուռ իյնալ և օգնութիւն խնդրել, հարուստները իրենց խնայողութիւնները կը լեցնէին անոնց քնքուշ ափերուն մէջ, աղքատը իր բերնին հացը կը կտրէր՝ օգնելու Իտալիոյ ազատութեան։ Պատուայի համալսարանէն 150 ուսանողներ գացին ազատութեան „հազարեակին“ միանալու։ Եւրոպայի ամէն կողմէն անգլիացի, ֆրանսացի, մաճառ, զւիցերիացի և այլն, մեծ մասով գրագէտ և նշանաւոր անձնաւորութիւններ, յափշտակուած Գարիբալդիի հմայքէն, եկած էին Իտալիոյ ազատութեան համար կռուելու ամենազզուելի բռնակալութիւններու դէմ։

Գարիբալդին Նապոլիցիներուն համար սուրբ մըն էր, որուն գնդակ չէր բռնիր. „կռուէն յետոյ, կըսէին, ան շապիկը կը թօթուէ և գնդակները վար կը լողան“, նոյն իսկ իր զինուորները, որոնք իրենց զօրավարին դիւթական ազդեցութեան տակ էին, երբեմն իրարու կը հարցնէին „արդեօք մահը չը վախնա՞ր անկէ“։ Աշխարհի ամէն երկրներէն հաւաքուած այդ պատահական մարտիկները, միշտ պատրաստ էին կրակը նետուելու անշահախնդիր դատի մը համար։ Մարդկութեան իդէալի կրակոտ շրջանն էր։

Այդքանը բաւ չէր։ Եթէ հարաւը Իտալիոյ միութեան յարած էր, դեռ կեդրոնը և Հռոմը կը մնային։ Գարիբալդիի նպատակակէտը Հռոմն էր, „պէտք է երթամ, կըսէր, և Քիրինալի գագաթէն Վիկտոր Էմմանուէլը թագաւոր հռչակեմ ամբողջ Իտալիոյ“։ „Հռոմ կամ մահ“ ահա իր նշանաբանը։ Հռոմի տիրելով Իտալիոյ սիրտը և հաւասարակշռութիւնը ապահովուած կը կարծէր, և չէր հանդուրժեր որ Յաւիտենական քաղաքը, որ կը պանծար հին Իտալիոյ մեծութիւնով, կղերին ձեռքը մնար։

Քավուր վայրկեան մը երկիւղ զգաց Գարիբալդիի խիզախ արշաւանքէն, որ կրնար միջազգային բարդութիւն առաջ բերել եթէ Պապը վռնտէր Հռոմէն։ Քավուր հաշուի մարդն էր, Գարիբալդի յանդգնութեան, որ իրերը և պատմութիւնը յանկարծակիի կը բերէր։ Քավուր եթէ չը կրցաւ կասեցնել Գարիբալդիի վազքը, օգտուեցաւ և գրաւեց կեդր. Իտալիոյ նահանգները, բացի Հռոմի մասէն, այնպէս որ պապութիւնը ազատութեան շղթայի մը մէջ խեղդամահ կըլլար։

1864-ին Անգլիա անցաւ, Գարիբալդիի համար մեծ յաղթանակ մը եղաւ այդ այցելութիւնը, բայց սպասած քաղաքական արդիւնքը չը ստացաւ։

Երկու կարևոր դէպքեր կան լրացնելու Իտալիոյ միութիւնը։ Աւստրո-գերմանական պատերազմը, երբ Իտալիան օգտուեցաւ այդ առիթէն և գրաւեց Վենետիկը որ դեռ Աւստրիոյ էր։ Իսկ 1870-ի պատերազմին, երբ Ֆրանսան զբաղած էր՝ գրաւեց Հռոմը, որ բովանդակ Իտալիոյ մայրաքաղաքը դարձաւ և Իտալիան գտաւ իր հաւասարակշռութիւնը։ Վիկտոր Էմմանուէլ կըսէր, „Իտալիան ազատ և մէկ է. մենէ կախում ունի այլևս մեծ և երջանիկ ընել զայն“։ Պապին աշխարհական իշխանութիւնը այլևս չիք էր, Իտալիան „երաշխաւորութեան“ օրէնքը շնորհեց Պապին, այդ օրէնքը սակայն „ձիթենիի ճիւղ մըն էր սուրին ծայրով ներկայացուցած“։ Պապը այդ օրէն ի վեր երբ իր երկրային փառքէն մերկացուցին, Վատիկանի մէջ կամաւոր և տխուր կալանաւոր մընէ։

1870-ի պատերազմին Գարիբալդի Ֆրանսայի օգնութեան թռաւ և գործեց մեծ քաջութիւններ։ Ֆրանսայի պատերազմը վերջ դրաւ Գարիբալդիի անզուգական հերոսի ասպարէզին, ուրկէ յետոյ վերադարձաւ իր փոքրիկ կղզին։

1875-ին երեսփոխան ընտրուելով՝ յաղթական մուտք գործեց Հռոմ, գնաց տեսաւ թագաւորը որ համբուրեց զայն։ Խորհրդարանին մէջ հանրապետականներու կողմը բազմեցաւ։

Այնքան կռիւներէ յոգնած և ուժասպառ, անդամա-

լուծեալ ու ծերացած, այդ „իդէալի հերոսը“ ինչպէս ըսած է Հիւկօ, որու ուսին վրայէն հրացանը անպակաս էր, քափրէրա կղզին, իր ճգնարանին մէջ խաղաղ մարեցաւ յունիս 2. 1882-ին։

Անոր մահուան լուրը աշխարհի շրջանը ըրաւ. Իտալիոյ մէջ սահմանադրութեան տօները դադարեցան. Ֆրանսա, Անգլիա, Մ. Նահանգները, Զուիցերիա, Հունգարիա, Պաշտօնապէս մասնակցեցան Իտալիոյ սուգին։

Գարիբալդիի մէջ տիրող դիծը անոր մարդասիրական լայն զգացումն է, իր սկզբունքն էր միշտ թոյլի կողմը անցնիլ։ Մաքուր, կրակոտ, անշահախնդիր և անվախ, ասպետականութեան անսպառ աղբիւր մըն էր իր սիրտը։ Գիտէր դերագոյն շահերու համար զոհել իր նախապատութիւնները։ Գարիբալդի ազգային իդէալի մարմնացումը եղաւ և մինչև վերջ վառ պահեց Իտալիոյ ազգային ոգին։ Անոր յաջողութեան գլխաւորներէն մէկն ալ, բացի իր ազնուական հմայքէն և մշտանորոգ հայրենասիրութենէն, Իտալիոյ ժողովրդին ջերմ հայրենասիրութիւնն էր, որ ոչ մէկ տեղ, չը մատնեց իր հերոսը, հակառակ մահուան և բանտերու։ Գարիբալդի հիացած էր իր ժողովրդի այդ անդաւաճան և անձնուրաց ոգիին վրայ և „հպարտ կզգար“ իտալացի ըլլալուն։ Ահա այդ բարոյական համերաշխութիւնով և անհուն զոհաբերութիւնովն էր որ այդ սրտի և հոգիի տէր մեծ մարդը ստեղծեց ազատ Իտալիան։

Ի պատիւ իրեն ըսել որ երբէք չը փնտռեց քաղաքական դեր խաղալ, իր զինուորի դերովը բաւականացաւ։

Ալէքսանդր Տիւմա օր մը Գարիբալդիէն տեղեկութիւններ կուզէր անոր մանկութեան վրայ։

„Իրաւ որ, ըսաւ մեծ ազատարարը, ես ալ շատ բան չը գիտեմ, միայն թէ երբ դեռ մանուկ էի սիրտ ունեցայ։

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱԶԴԵՐ

ԿՈՉ ՀԱՅ ԵՒ ԹՈՒՐՔ ԱՇԽԱՏԱՒՈՐՈՒԹԵԱՆ

Հազիւ է դադրել երկու աշխատաւոր հարևան ժողովուրդների մէջ տեղի ունեցող արիւնալի փոթորիկը, հազիւ են հանգստացել դառն յիշողութիւններով թելադրուած կրքերը, հազիւ է սկսել շունչ քաշել ու ոտքի կանգնել սպանիչ ու անմիտ պատերազմից յետոյ հայ և թուրք աշխատաւորութիւնը, հազիւ է սկսում նա ընդհանուր եղբայրական ու քաղաքացիական նպատակներով ոգևորել ու մթութեան մէջ աշխատողի չղուտ ձեռքն են իրար կառկառում և տիրող թշնամութեան, անհաւասարութեան ու անարդարութեան չարիքի արմատը փնտռում,—ահա նորից են առաջ գալիս մութ ուժերը, նորից է սկիզբ առնում պրովոկացիան, նորից է ծնւում ատած ու անիծած ուրուականը եղբայրասպան թշնամական տրամադրութեան։

Սկիզբ են առել անհատական սպանութիւնները, որոնց հետևանքները յայտնի են բոլորին։

Հ. Յ. Դաշնակցութիւնը որ դաւանում է աշխատաւոր մասսաների համերաշխ քաղաքական ու տնտեսական գործակցութեան գաղափարը որ աշխատանքի անունից սոցիալիստական ու յեղափոխական կռիւ է յայտարարել շահագործող կազմակերպած փոքրամասնութեանը—որոշել է կովկասեան իրականութեան մէջ ստեղծել այդ գաղափարի ու այդ կռուի յաջողութեանը անհրաժեշտ պայմաններ. որոշել է թուրք գիւղացի ու բանուորի կոշտացած ձեռքը միացընել հայ գիւղացու ու բանուորի բազուկին, մի հարուածի մէջ արտայայտելու համար ընդհանուր բողոքը, մի ճանապարհով տանելու նրանց դէպի արդար ապագան, դէպի աշխատանքի կառավարութիւնը։

Ահա այս նպատակով է Հ. Յ. Դաշնակցութեան Ապառաժի Կ. Կոմիտէն որոշել է տեռորի ենթարկել Շօշու գիւղացի Ա ւ ա գ ը, մի մարդ որ գլխաւոր մեղսակիցն է Շուշուց դուրս մի շաբաթ առաջ կատարուած Սէյիդ Մէհմէտի սպանութեան մէջ։

Չը նայած որ սպանութիւնը մասամբ անձնական վրէժխնդրութեան բնաւորութիւն ունի, չը նայած որ այդ գարշելի սպանութեան մէջ կան մեղմացուցիչ հանգամանքներ, Հ. Յ. Դաշնակցութեան Ապառաժի Կ. Կ. առանց տատանուելու մահուան դատավճիռ է կարդում այդ պրովոկատորական ակտի հեղինակի վրայ և գալիս է հայ և թուրք հասարակութեանը հրաւիրելու զգաստ ու խոհեմ մնալ, չը տարուիլ անհատական սպանութիւնների տպաւորութիւններով, չը մթացնել մթնոլորտը ի զուր վախերով. չը լարել եղբայրական յարաբերութիւնները հեռու մնալ գրգռող պատմութիւններից. յիշել և հաւատալ որ այդօրինակ ամէն մի քայլ անխնայ կերպով ամենախիստ պատժի է ենթարկուելու Դաշնակցութեան կողմից։

Եւ թող ըմբռնեն ամենքը մի անգամ ընդ միշտ որ Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ շահագրգռած թուրք ու հայ աշխատաւորութեան մերձեցման գաղափարով, արթուն կերպով հսկում է բոլոր պրովոկատորական մութ ուժերի վրայ և իր պատժի սուրը է պատրաստել դիմաւորելու համար թուրք ու հայ աշխատաւորութեան թշնամիներին։

Ցայտնուում է նոյնպէս ի գիտութիւն հասարակութեան որ սէյիդի սպանութեան մասնակցող երկու ուրիշները հեռացուում են Ապառաժի սահմաններից։

Թող կորչին պրովոկատորները
Կեցցէ ժողովուրդների համերաշխութիւնը
Կեցցէ աշխատաւոր Դաշնակցութիւնը։

Հ. Յ. Դ.
ԱՊԱՌԱԺԻ Կ. ԿՕՄԻՏԷ

ԱԶԴ

Լայնածաւալ Ռուսաստանը տնքում է քաղաքական և տնտեսական անարխիայի տակ։ Մի կողմից անգործունէութիւնը իսկ միւս կողմից ժողովրդի հաւատը վայելող և կամքը արտայայտող ուժի բացակայութիւնը, ստեղծել են այնպիսի այլանդակ պայմաններ, ուր ամբողջ ժողովուրդը ահ ու սարսափի մէջ է ընկել։ Այդ ընդհանուր ցաւը ներքին Ռուսաստանից հասնելով մեր երկրին աւելի մեծ չափեր ու այլանդակ գոյներ է ստանում։ Դրա պատճառը մեր երկրի յետամնացութիւնն ու նրանից առաջացած անսահման չարիքներն են։ Ժամանակաւորապէս հանգստացած քաղաքն ու ժողովուրդը վերջերս դարձեալ ալեկոծուել են։ Ինքնապաշտպանութեան նախկին զինուորներից շատերը, ղեկավարութեամբ պրոֆեսիոնալ աւազակների և ծեռքծեռքի տուած տեղական ոստիկանութեան հետ լաց ու կոծ են գցել քաղաքի ազգաբնակութեան մէջ։ «Ռուկի վերխ» անելով ամենաանշուշտ խանութպանին, նրանք ամենաստոր կերպով իրենց արիւնոտ ձեռքը բարձրացնում են կանանց և մինչև իսկ երեխաների վրայ։ Այդ քստմնելի երևոյթը ամենարէակցիոն տրամադրութիւն է սերմանում ժողովրդի մէջ։ Վերագրելով այդ բոլորը յեղափոխական և գաղափարական կուսակցութիւններին, ժողովուրդը յեղափոխութեան այս նեղ շրջանում պատրաստ է փառաբանելու անցեալի «խաղաղ» ռէժիմը։ Միւս կողմից այն փաստը, որ առանց պատժուելու մի գիշերում կարելի է 100-ներ ձեռք բերել, գրաւում է նոյնիսկ կազմակերպած աշխատաւորութիւնը։ Բանուորներից շատերը սև ու չարքաշ աշխատանքին գերադասում են հեշտ կողոպուտը և այդպիսով մի ահռելի դէմօրալիզացիա է ընկնում նոյնիսկ կազմակերպուած բանուորների շարքերում։

Յեղափ. կուսակցութիւնների պարտքը չէ միայն կուել ներկայ ռէժիմի և անգործութեան դէմ, այլ հոգալ նրանցից առաջացած չարիքների մասին, որոնք բարոյապէս և ֆիզիքապէս քայքայում են առանց էն էլ քամած ժողովուրդը։

Հ. Յ. Դ.-ը հաւատարիմ իր սկզբունքին՝ միշտ պաշտպան հանդիսանալ ժողովրդին ընդդէմ բոլոր տեսակի հարստահարիչների և կեղեքիչների, մի քանի անգամ զգուշացնելուց յետոյ ինքնապաշտպանութեան նախկին զինուորներին, որոնք այսօր գլխաւորապէս ղեկավարում են այդ թալանը, ծերբակալեց նրանցից ամենաաչքի ընկնողներին

և կը վարուի նրանց հետ ըստ կազմակերպչական կանոնների։

Սրանով Հ. Յ. Դ.ը վերջնականապէս յայտարարում է և մնացեալ գինուորներին՝ որոնք գիտակցաբար թէ անգիտակցաբար հետևում են պրոֆեսիոնալ աւազակներին, միանգամ ընդմիշտ թողնեն այդ մութ աշխատանքը և չըստիպեն կազմակերպութեանը դիմելու աւելի սուր միջոցների։

Իսկ մեր կազմակերպուած բոլոր խմբերին առաջարկում ենք աչալուրջ լինել իրենց շարքերի վրայ, թոյլ չը տալ ո՛չ ոքին ենթարկել բռնակալ հրապոյրին և անողոք լինել անսանձների վերաբերմամբ։

Կոչ ենք անում նաև մնացեալ յեղափոխական կուսակցութիւններին նոյն վերաբերմունքը ունենալ իրենց շարքերի նկատմամբ։

Կ. ԿՈՄԻՏԷ

Բագու 8 օգոստոսի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ

Պարսկաստանը յանկարծական լի ճգնաժամ մը կանցնէ այս րոպէիս։ Խորհրդարանի անզօր և անկայուն վիճակը և սահմանադրական թիւրք-պարսկական կռիւը՝ վարչական քաոս մը վեր կը հանեն Իրանի կայսրութեան մէջ։ Այս շփոթ և անելանելի դրութեան մէջ „քաղաքական ոճիրը“ իբր հետեւանք անկերպարան վարչութեան մը, և ժողովրդի թշուառութեան հրապարակ կուգայ, որուն կարեւոր զոհը եղաւ Աթապէկը ազամ՝ Էմին Էսսուլթանը Պարսկաստանի նախարարապետը՝ որ ժամանակակից Իրանի էն ականաւոր անձնաւորութիւններէն մէկը համարուած էր։

Օգոստոս 31 շաբաթ երեկոյին, երբ Նախարարը Ազգ. ժողովի նիստէն դուրս կելլէր, ատրճանակի չորս հարուածով սպաննեցաւ։ Սպաննեցան նաև զինուոր մը և կոզակ մը։ Սպանիչներէն մէկը անձնասպան եղաւ, մէկը ձերբակալուեցաւ, իսկ երկուքը փախան։

Նախարարապետին մահը ցաւ պատճառած է հասարակութեան մէջ, խորհրդարանը յայտարարեց որ այդ կորուստը անդարմանելի է։

Սպանիչներուն վրայ իբր թէ գտնուած թղթեր ցոյց կուտան որ այդ ոճիրը Պաքուի մէջ գոյութիւն ունեցող յեղափոխական կոմիտէի գործն է։

Պարսիկ արմատականները կը մեղադրէին վեզիրը իբր յետին դաւաճան մտքեր ունեցող սահմանադրութեան դէմ, որը կուզէր մահացնել, որ իրենց ուզածին պէս առաջ չէր քալեր՝ սահմանադրական բարենորոգումներուն մէջ և թէ չէր կրցած պինդ դիրք բռնել Թիւրքիոյ հանդէպ։

Անշուշտ Պարսկաստանը կը կորսնցնէ իր ամենակարող պետական մարդը, որը կը կարծուի թէ, դժար պիտի ըլլայ փոխարինել մանաւանդ այս պահուն՝ երբ երկիրը իր պատմութեան էն տագնապալից շրջանը կը բոլորէ, գանձը դատարկ, տուրքերը ամենաանկանոն կերպով կը հաւաքուին կամ չեն հաւաքուիր, ասոր աւելցուր երկրի մէջ անիշխանական դրութեան հետեւանքով, աւազակութեան և անապահովութեան աճումը։

Թէ որքան առոյգ է նախարարին հակասահմանադրական կասկածելիութիւնը, սա յայտնի է սակայն Էմին էս Սուլթանը՝ այն հին և փորձառու պետական մարդոցմէ էր՝ որ գիտէր կշռել Իրանի դրութիւնը։ Երբ առաջին անգամ Պահարիստանի մէջ (Ազգ. Խորհրդարանը) խօսեցաւ, ազգ. ներկայացուցիչներուն ուղղած ճառին մէջ կըսէր „Խորհրդարանը իրաւունքներ ունի, բայց պարտականութիւններ ալ ունի և որոնց գլխաւորն է չափաւորութիւնը, յիշեցէք որ երկիր մը մէկ օրէն միւսը պարզ քուէով մը չը կերպարանափոխուիր“։ Այս տեսութիւնը սակայն Պարսկաստանի ծով և ահաւոր տառապանքին և թշուառութեան ալիքներուն առջև չկրցաւ դիմանալ։ Պարսկաստանը կը պահանջէ արմատական և ազդու բարենորոգումներ հնարմատ չարիքին դէմ, համապատասխան ժամանակի ոգիին և մարդկային արժանապատուութեան։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ցիւրիխի, Լայպցիգի և Դարմշտադի դաշնակցական և համակրող ուսանողները լսելով Եւրոպ. դաշ. ուսանողութեան պատգամաւորի զեկուցումը չորրորդ Ընդհ. ժողովի մասին և ինկատի ունենալով

1. Որ Ընդհ. ժողովի մշակած ծրագիրը արտայայտում է իր մէջ թէ՛ այն բոլոր առանձնայատկութիւնները, որ Ս. Ր.-ական դպրոցը մտցնում է սոցիալիստական մտածողութեան մէջ և թէ մեր պայմանների ուրոյնութիւնը,

2. Որ Ընդհ. ժողովի որոշումների մէջ անխախտ է պահուած այն յեղափոխական ոգին, որ Դաշնակցութեան յատկանիշն է կազմել նրա ծագման օրից,

3. Որ Ընդհ. ժողովի մշակած ծրագրից և կայացրած որոշումներից յետոյ անվիճելիօրէն իրաւական ուժ են ստանում այն բոլոր պայմանները, որոնք անհրաժեշտ են մի կուսակցութեան մէջ սոցիալիստական գործունէութիւն վարելու համար՝

Գտնում են, որ Ընդհ. ժողովը բարեխղճութեամբ է ընդառաջ գնացել կուսակցութեան կենսական պահանջներին և յայտնում է իր գոհունակութիւնը ժողովի բեղմնաւոր ընթացքի և յաջող վախճանի համար։

Մասնաւորապէս կանգ առնելով այսպէս կոչուած անջատական խնդրի վրայ և ինկատի ունենալով,

Որ երկու դատերի միասին վարելը միևնոյն կուսակցութեան մէջ պայմանաւորուած է ո՛չ միայն տաճկահայ դատի արդի հանգամանքներով, այլ և միանգամայն խրախուսելի է միջազգային սոցիալիզմի շահի տեսակէտից, քանի որ Դաշնակցութիւնը ներկայումս հանդիսանում է իբրև միակ կենտրոնական քաղաքական կուսակցութիւնը, որ հնարաւորութիւն ունի և պարտաւոր է սոցիալիզմի իդէաները տաճկահայ աշխատաւոր ժողովրդի միջոցով արծարծել Օսմանեան պետութեան մէջ տառապող աշխատաւոր մասսաների միջև այդ մասսաներին դէպի միջազգային սոցիալիզմի բանակը առաջնորդելու՝

Ուսանողութիւնը գտնում է, որ Ընդհ. ժողովի այդ մասին կայացրած որոշումը ընդհանրապէս աշխատաւոր դասակարգի շահերի գիտակցութեամբ է տոգորուած, և յայտնում է իր անվերապահ գոհունակութիւնը, որ Ընդհ. ժողովը մեր երկու դատերն էլ միևնոյն դրօշի տակ վարելու գործը վեր է դասել զանազան ժամանակաւոր տրամադրութիւններից։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրօն ստացած է,

Զուիցերիա.—Նուէր Եղեւնիէն 5 ֆրանկ, Վարդանեանէն 20, Մարգարիտայէն 5 ֆր.:

Ռուսաստան.—Ոսկանապատի Կ. Կոմիտէէն 52596 ֆր. 80 սան.:

Գերմանիա.—Բրէսլաւ բժ. Թադ-էն 15 ֆր.:

Եգիպտոս.—Դր. Պապ-էն 15 ֆր.:

Ընդհ. գումար 52656 ֆր. եւ 80 սանտ.

Ատրպատականի Կեդ. Կոմիտէն՝

ԳԻԼԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՇՐՋԱՆ.—1906 յունուար 1-ից յունիս 30 անդամավճարներ՝ Ռաշիդում, հետեւեալ խմբերից՝ Որոտան 254 դուան, Կարին 352, Մեղու 186, Հրանիգ 175, Դդորդ Հայաստանի 380, Ղարադաղ 225, Փունջ 281, Կայծակ 375, Հազրէ 198, Կտրիչ 187, Գեղունի 21, Վինակախաղից 60, Տուգանք 10, Նուէրներ՝ 26, Տ. Շ. Մ. Յ. 50, Լ. Բ. 20, Պարսկից-Հայից 20, Իսկանդարից 100 դռ.:

ՊՕՐՏ-ԱՐՏՈՒՐ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Հաւօ 280 դուան, Սէր 916, Եգիպտացի 218, Հրայր 255, Քրիստափոր 239, Աղբիւր 214, Նուէրներ Համբորդից 50, Ս,-ից 120, Ա-ից 60, Ա.-ից 50, Վինակախաղից 348. 50, Նուէր՝ Ա. Յ. 22, տուգանք Երկաթից 10, Վինակախաղից 993, Երեկոյթում Նուէր Բ-ից 900, Նոյնի ֆրոզ որդուց 30, Տ. Ա. Դ. 22, Ռաշ. տոմսերի համար 26, Դաշտային հանդէսից 1000·75, Աւետիս մանզալուց № 53 հանգանակութեան թերթով 1040, Ծախած բաց նամակներ 30, Ներկայացման պրօգրամներից 10, Ռուբէից Նուէր 150. 1 ատրճանակի արժէք 150, Ծաղիկ վաճառելուց 30:

ԱՐԱԽԻՑ ԳԱԶԱԶ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ.—Հետեւեալ խմբերից՝ Խանան 240, Շաւէ 24, Հրայր 140, Արծագանք 104, Աֆղան 105. Ներկայացումներից 171·20, եւս 100, եւս 80, 20 նաւ նկարի վաճառումից 10, 1 ձիան արժէք 250: (Կը շարունակուի)